

# ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ 2022-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra





# Բովանդակություն

**Նախաբան** **2**

**1. Զարգացման համատեքստ** **3**

**2. Շվեյցարիայի արտաքին քաղաքականությունը ֈ դոնորների տեղաբաշխումը Հարավային Կովկասում** **7**

**3. 2017-2021 ժամանակահատվածի արդյունքներ ֈ քաղված դասեր** **9**

3.1. Տարածաշրջանային արդյունքներ 9
3.2. Երեք երկրների արդյունքները. արդյունավետ ժողովրդավարական կառույցներ, մարդկային ապահովություն և անվտանգություն 10
3.3. Երեք երկրների արդյունքները. ներառական և կայուն տնտեսական զարգացում 11

**4. 2022–2025 թվականների համագործակցության ծրագրի եզրահանգումներ** **14**

**5. Ռազմավարական կողմնորոշումն ու Շվեյցարիայի առաջնահերթությունները 2022-2025 թվականների համար** **17**

5.1. Տարածաշրջանում քաղաքացիական ներգրավվածության և քաղաքացիական տարածքի, ինչպես նաև համագործակցության պաշտպանություն և խթանում 18
5.2. Ժողովրդավարության և պետական ինստիտուտների հզորացում 19
5.3. Տնտեսական զարգացման բարելավում և արժանապատիվ աշխատատեղերի ստեղծում 20
5.4. Կլիմայի դիմակայունության բարձրացում և ռեսուրսների կայուն կառավարում 22

**6. Ծրագրի կառավարում ֈ իրականացում** **23**

**7. Ծրագրի ղեկավարում** **24**

**Հավելված 1. Արդյունքների շրջանակ 2022-2025** **25**

**Հավելված 2. Շվեյցարական համագործակցության 2022–2025 թվականների ծրագրի շրջանակներում նախատեսված հատկացումներ** **43**

**Հավելված 3. Հապավումներ ֈ համառոտագրություններ** **44**

# Նախաբան

Հարավային Կովկասը անցուղի է Եվրոպայի և Ասիայի միջև՝ ապրանքների և էներգիայի փոխադրման միջանցք: Այս տարածաշրջանին համեմատաբար մոտ լինելու պատճառով Շվեյցարիան հստակ շահագրգռված է Հարավային Կովկասում խաղաղության և կայունության պահպանմամբ՝ խթանելով տարածաշրջանային երկխոսությունը, մարդու իրավունքները, ժողովրդավարական արժեքները և զարգացման հավասար հնարավորությունները:

Շվեյցարիայի ներգրավվածությունը Հարավային Կովկասում սկիզբ է առել 1988 թվականից, այնուհետև ուժեղ երկկողմ միջամտությունների միջոցով ընդլայնվել է Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում՝ և խթանել տարածաշրջանում տնտեսական և ժողովրդավարական զարգացումը: Շվեյցարիան համարվում է համագործակցության արդյունավետ գործիքակազմ կիրառող զարգացման վստահելի գործընկեր: Այն համարվում է նաև վստահելի գործընկեր՝ հակամարտությունների միջնորդության և կարգավորման հարցում իր չեզոքության և փորձառության շնորհիվ: Հովանավոր-պետության երկարաժամկետ լիազորությունները Վրաստանի և Ռուսաստանի նկատմամբ դրա միայն մեկ օրինակն են:

Հարավային Կովկասի համար շվեյցարական համագործակցության 2022-2025 թվականների ծրագիրը վերահաստատում է Շվեյցարիայի շարունակական հանձնառությունը՝ նպաստելու տարածաշրջանում խաղաղ, ներառական և տոկուն հասարակությունների զարգացմանը: Նախորդ ձեռքբերումների հիման վրա Շվեյցարիան մտադիր է արդյունավետ ներդրում ունենալ տարածաշրջանի զարգացման գործընթացներում՝ կենտրոնանալով երեք հիմնական ոլորտների վրա. կառավարում և խաղաղություն, տնտեսական զարգացում և զբաղվածություն, շրջակա միջավայր և կլիմայի փոփոխություն: Ֆինանսական հանձնառությունն այս փուլի համար կազմում է 80 միլիոն շվեյցարական ֆրանկ:

Այս ծրագիրը համատեղ կիրականացնեն Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալությունը (ՇԶՀԳ), Տնտեսական հարցերի պետական քարտուղարությունը (ՇՏՊՔ) և Խաղաղության և մարդու իրավունքների բաժինը (ԽՄԻԲ): Այն մշակվել է ազգային և տեղական իշխանությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի գործընկերների հետ սերտ խորհրդակցությունների արդյունքում: Այն մանրակրկիտ մշակված է մեր գործընկեր երկրների առաջնահերթություններին և կարիքներին համապատասխան՝ ինչպես Շվեյցարիայի Միջազգային համագործակցության 2021-2024 թվականների ռազմավարությամբ սահմանված սկզբունքներին, այնպես էլ 2030 թվականի կայուն զարգացման օրակարգին համահունչ:

Շվեյցարիան՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում իր դեսպանատներով և Միջազգային համագործակցության իր երեք թիմերով, որոնք գործում են որպես Հարավային Կովկասի տարածաշրջանային համագործակցության մեկ գրասենյակ, համապարփակ մոտեցում է ցուցաբերում տարածաշրջանի մարտահրավերներին: Երկկողմ համագործակցությունը բարելավվում է տարածաշրջանային միջամտություններով, որոնք վերաբերում են բոլոր երեք երկրներին և ուղղված են նման բարդ համատեքստում երկխոսության ու համագործակցության խթանմանը:

Մենք վստահ ենք, որ այս ծրագրի նպատակներն ու առաջնահերթությունները նպաստում են Հարավային Կովկասի կայուն և ներառական զարգացման խթանմանը:

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն (ՇԶՀԳ)
Պատրիսիա Դանցի
Գլխավոր տնօրեն

Շվեյցարիայի տնտեսական հարցերի պետական քարտուղարություն (ՇՏՊՔ)
Մարի-Գաբրիել Ինեյխեն Ֆլեյշ
Պետքարտուղար

Պետական քարտուղարության արտաքին գործերի դաշնային դեպարտամենտ (ԱԳԴԴ)
Լիվիա Լեու
Պետքարտուղար

# 1. Զարգացման համատեքստ

Տեղակայված լինելով Սև և Կասպից ծովերի, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության, Թուրքիայի և Իրանի միջև՝ **Հարավային Կովկասը խիստ բազմազան տարածաշրջան է**, որը կապ է հաստատում Եվրոպայի և Ասիայի միջև և զգալի դեր է խաղում՝ որպես ապրանքների և էներգիայի փոխադրման միջանցք: Բացի այդ, Կովկասի էկոտարածաշրջանը կենսաբանական բազմազանության առումով աշխարհի ամենահարուստներից մեկն է: Խորհրդային Միության փլուզումից և Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի՝ որպես անկախ հանրապետությունների վերածնունդից ի վեր, տարածաշրջանը, թեպետ անհավասար, բայց առաջընթաց է գրանցել ժողովրդավարական և շուկայական համակարգերի գործարկման ուղղությամբ: Սակայն, հակամարտությունների (Լեռնային Ղարաբաղ, Հարավային Օսիա, Աբխազիա), աշխարհաքաղաքական տարբեր կողմնորոշումների, բարդ ներքին քաղաքականության և ՔՈՎԻԴ-19 համավարակի համատեղ ազդեցությունը խոչընդոտել է այս զարգացմանը: Մասնատվածության, անորոշության ու անկայունության պատճառով Հարավային Կովկասը բնութագրվում է որպես փխրուն և հակամարտությունների հակված տարածաշրջան:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության 44-օրյա կատաղի բռնկումը, որն ավարտվեց 2020 թվականի նոյեմբերին, զգալի մարդկային, տնտեսական և քաղաքական ազդեցություն ունեցավ և ընդգծեց **աշխարհաքաղաքական տարամետ կողմնորոշումները** տարածաշրջանում: Մինչդեռ Հայաստանը մեծապես ապավինում է Ռուսաստանին և հետխորհրդային պետությունների Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ), Ադրբեջանը ամրապնդում է իր կապերը Թուրքիայի հետ, իսկ Վրաստանը հայացքն ուղղում է Սև ծովից այն կողմ՝ հավակնելով դառնալ Եվրամիության (ԵՄ) և Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության (ՆԱՏՕ) անդամ: Թուրքիան ընդլայնեց իր ազդեցությունը, իսկ Ռուսաստանն էլ ավելի ամրապնդեց իր ներկայությունը տարածաշրջանում՝ միջնորդելով Լեռնային Ղարաբաղի պատերազմի հրադադարի հաստատմանը և տեղակայելով խաղաղապահ զորքեր: Մինչդեռ, Չինաստանը Հարավային Կովկասը դիտարկում է որպես տարանցիկ միջանցք, սակայն դեռևս փոքր դեր է խաղում տարածաշր-





ջանում՝ սահմանափակվելով վարկերի վրա հիմնված մի քանի ներդրումներով և փափուկ ուժի կիրառմամբ: Ի վերջո, ԱՄՆ-ը և ԵՄ-ն ռազմավարական նպատակաուղղվածությամբ են աջակցում տարածաշրջանի բարեփոխումների գործընթացներին:

Տարածաշրջանի **անվտանգությանը սպառնացող խնդիրները և քաղաքական մարտահրավերները** միշտ հակված են եղել **ստվերելու տնտեսական և կառավարման օրակարգերը**, և սա, ըստ ամենայնի, խանգարել է կառավարություններին՝ իրականացնելու կառուցվածքային բարեփոխումներ և նպաստելու իրենց երկրի կայուն աճին: ՔՈՎԻԴ-19-ի դեմ պայքարին ուղղած կառավարությունների ընդունած սահմանափակումները, այդ թվում սահմանների ժամանակավոր փակումը և մարդկանց տեղաշարժի հետ կապված այլ սահմանափակումները, ավելի են խորացրել տարածաշրջանային մասնատվածությունը, բացառությամբ **ապրանքների տարանցման:**

Վերջին հինգ տարիների ընթացքում **ներքին քաղաքականությունը** տարածաշրջանում նշանավորվել է իշխանության համար մղվող պայքարով, և երեք երկրներն էլ շարունակում են միտված լինել տարբեր աստիճանի **քաղաքացիական խռովությունների**:

**Հայաստանում** կոռուպցիայի պատճառով առաջացած համատարած հիասթափության հետևանքով զանգվածային բողոքի ակցիաները 2018 թվականի մայիսին հանգեցրին թավշյա հեղափոխության, ինչի արդյունքում էլ ընդդիմության առաջնորդներից մեկը կառավարության ղեկավար նշանակվեց: Նորընտիր խորհրդարանը, նոր վարչապետն ու կառավարությունը վստահության և ժողովրդական աջակցության համեմատաբար բարձր մակարդակ ունեին՝ չնայած բարեփոխումներ իրականացնելու իրենց անկարողության մասին ավելի ու ավելի շատ հնչող քննադատություններին: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունից/վերջին պատերազմից հետո կառավարության ղեկավարի հրաժարականի կոչերն ուժգնացան, այդուհանդերձ, 2021 թվականի հունիսին կայացած արտահերթ ընտրություններում՝ գործող իշխանությունը ակնհայտ հաղթանակ տարավ ընտրություններում:

**Ադրբեջանում** 2020 թվականի փետրվարին անցկացված վաղ խորհրդարանական ընտրությունները, որոնք կոչված էին արագացնելու բարեփոխումների ընթացքը, չփոխեցին ուժերի հարաբերակցությունը: Լեռնային Ղարաբաղի պատերազմի ելքը ամրապնդեց գործող կառավարության դիրքերը՝ չնայած ռուս խաղաղապահների տեղակայմանն ուղղված որոշ քննադատություններին: Կառավարության առջև ծառացած է հակամարտությունից տուժած շրջանների վերականգնման լուրջ մարտահրավերը, և ակնկալվում է, որ այս հարցը միջնաժամկետ հեռանկարում

ուշադրության կենտրոնում կլինի:

**Վրաստանում** ցույցերը մատնանշում էին մի շարք խնդիրներ՝ վերնախավի կոռումպացվածությունը, օրենքի գերակայության ու դատական իշխանության անկախության քայքայումը, և ռուսական պատվիրակության այցը խորհրդարան: Բայց անկարգությունները նաև խիստ բևեռացված քաղաքական իրավիճակի արդյունք էին՝ իշխող կուսակցության և ընդդիմության միջև աճող հակասություններով: Այս հակամարտությունը, որն ուղեկցվում էր իշխող կուսակցության ներսում առաջացող պառակտվածությամբ, հանգեցրեց մի քանի վարչապետների փոփոխությունների (2018, 2019 և 2021 թվականներին) և կառավարության վերադասավորումների: 2020 թվականի ընտրությունները չկարողացան լուծում տալ իրավիճակին, և ներքաղաքական դերակատարներն էլ, կարծես, չկարողացան ճգնաժամից դուրս գալու ելք գտնել առանց միջազգային հանրության միջամտության:

Այս զարգացումները շեշտում են **Եվրոպայի խորհրդի անդամ այս երկրներին աջակցելու** կարևորությունը **ներառական ժողովրդավարական համակարգերի կայացման հարցում**, որտեղ քաղաքացիական հասարակությունը կարևոր դեր ունի: Այս առումով վճռական գործողություններ են անհրաժեշտ՝ մարդու իրավունքները, լավ կառավարումը, օրենքի գերակայությունը և իշխանությունների բաժանումը խթանելու համար:

Հարավային Կովկասի տարածաշրջանի բոլոր երեք երկրները դասակարգվում են որպես միջին եկամուտ ունեցող երկրներ և վերջին մի քանի տարիների ընթացքում հասել են միջինից բարձր աճի իրենց մարդկային ներուժի զարգացման ինդեքսների (համաթվերի) համեստ բարելավումներով: **ՔՈՎԻԴ-19-ը համավարակը և իշխանությունների կիրառած խիստ միջոցները համավարակի տարածումը կասեցնելու համար** վտանգել են այդ ձեռքբերումները և դանդաղեցրել աղքատության անկման տեմպերը: Կառավարությունները փորձեցին ինտենսիվ պայքարել տնտեսական անկման դեմ՝ բարձրացնելով տնտեսության զարգացման մեջ պետական հատվածի դերը՝ միջնաժամկետ հեռանկարում ավելացնելով հարկաբյուջետային համախմբման անհրաժեշտությունը: Հայաստանում և Ադրբեջանում հետպատերազմական ծախսերը լրացուցիչ բեռ կդառնան պետական բյուջեների համար:

Տարածաշրջանի տնտեսությունները շարունակում են խիստ **խոցելի մնալ աշխարհաքաղաքական և արտաքին ցնցումների** նկատմամբ հիմնականում իրենց կառուցվածքի և **բազմազանության (դիվերսիֆիկացիայի) բացակայության** պատճառով: Բոլորը հիմնականում կախված են մի քանի անուն արտահանվող ապրանքներից կամ ծառայություններից (նավթ և գազ՝ Ադրբեջանում, հանքարդյունաբերություն՝ Հայաստանում և զբոսաշրջություն՝ Վրաստանում) և տրանսֆերտներից (դրսից ուղարկված գումարներից): Տարածաշրջանը նաև բնութագրվում է **անհավասարության բարձր մակարդակով**, որտեղ աղքատությունը առավելապես ազդում է գյուղական բնակչության և որոշակի խմբերի վրա, ինչպիսիք են փոքրամասնությունները և կանանց ղեկավարծ տնային տնտեսությունները: Դեռևս կարիք կա ընդհանուր առմամբ (նաև փոքրամասնությունների պաշտպանության համատեքստում) բարելավելու **ժողովրդավարությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը** և օրենքի գերակայությունը: Բոլոր երեք երկրներում կանայք դեռևս թերներկայացված են կառավարման համակարգում, ունեն ֆինանսների, կրթության ու աշխատաշուկաների հասանելիության պակաս և կրում են տնային չվճարվող աշխատանքի անհամաչափ բեռը: Համավարակը սրել է **գենդերային և սոցիալական անհավասարությունը**:

Թեև որոշ միգրանտներ վերադարձել են համավարակի պատճառով, սակայն տնտեսական հեռանկարների բացակայությունը կավելացնի արտագաղթը և ներքին **միգրացիան** դեպի մայրաքաղաքներ: Վրաստանը սկսել է աշխատանքային միգրացիայի դյուրացման նպատակով ԵՄ մի քանի երկրների հետ համաձայնագրեր կնքելու բանակցությունները: Այնուամենայնիվ, գյուղերից դեպի քաղաք շարունակվող միգրացիան, ինչպես նաև աշխատանքային արտագաղթը հիմնականում դեպի Ռուսաստան և Թուրքիա, ևս ընդգծում է սեփական երկրում արժանապատիվ ապրուստի միջոցներ ստեղծելու նպատակով բնակչությանը, մասնավորապես երիտասարդ կանանց ու տղամարդկանց ավելի լավ հնարավորություններով և **հմտություններով** անհապաղ ապահովելու անհրաժեշտությունը:

**Գյուղատնտեսությունը** շարունակում է հանդիսանալ զբաղվածության հիմնական ոլորտ, սակայն ներմուծվող արտադրանքի հետ մրցել կարողանալու և համաշխարհային շուկաներ մուտք գործելու համար գյուղացիները պետք է բարձրացնեն արտադրողականության մակարդակն ու որակը: Երեք երկրներում էլ ներառական տնտեսական աճ և ապրուստի կայուն միջոցներ ապահովելու հիմնական ուղիներից են առանցքային արժեշղթաների զարգացումը, **փոքր և միջին**



**ձեռնարկություններին (ՓՄՁ)** աջակցությունը և **տեղական տնտեսական զարգացման** խթանումը՝ միևնույն ժամանակ նպաստելով կլիմայի փոփոխություններին հարմարվողականությանը և բնական ռեսուրսների կայուն օգտագործմանը: Ներդրումներ ներգրավելու համար անհրաժեշտ են նաև կարգավորող բարեփոխումներ և **բարելավված բիզնես միջավայր**:

Մի շարք ուսումնասիրություններ մատնանշել են Հարավային Կովկասի լեռնային երկրների խոցելիությունը **կլիմայի հետ կապված դժվարությունների** *(սթրեսների)*՝ հատկապես սողանքների, ջրհեղեղների և երաշտների հանդեպ: Բնական աղետները (այդ թվում գյուղատնտեսական արտադրանքի կրճատումը) զգալի տնտեսական վնասներ են պատճառել , կյանքեր են խլել և ողջ տարածաշրջանում տեղի բնակչության տեղահանման պատճառ հանդիսացել: Երկրաշարժերն, օրինակ, ձնահյուսեր և լայնամասշտաբ սելավներ են առաջացրել: Տարածաշրջանի որոշ մասերում լուրջ բնապահպանական սպառնալիք է դարձել աճող չորայնությունն ու հողերի դեգրադացիային: Ի պատասխան այս ամենի երկրները պետք է անհրաժեշտ կարողություններ զարգացնեն ու գիտելիքներ կուտակեն արդյունավետ կանխարգելման և հարմարվողականության համար: Բնապահպանական և կլիմայական դժվարություններին *(սթրեսներին)* հարմարվելու նախաձեռնությունները կարող են ծառայել նաև հակամարտության գոտիներում վստահության ամրապնդմանը:

# 2. Շվեյցարիայի արտաքին քաղաքականությունը և դոնորների տեղաբաշխումը Հարավային Կովկասում

Հաշվի առնելով Հարավային Կովկասի հարաբերական մերձակայությունը՝ Շվեյցարիան հստակ շահագրգռվածություն ունի այստեղ **խաղաղության և կայունության** պահպանմանն աջակցելու հարցում՝ նպաստելով տարածաշրջանային երկխոսությանը, մարդու իրավունքների, ժողովրդավարական արժեքների կայացմանը և զարգացման հավասար հնարավորությունների ընձեռմանը: Շվեյցարիայի՝ մինչ օրս դրսևորած չեզոքության և փորձառության, զարգացման արդյունավետ գործիքների և հաջողված արդյունքների շնորհիվ հանդես է գալիս որպես վստահելի գործընկեր տարածաշրջանի երկրների համար հակամարտությունների կարգավորման և միջնորդության, ինչպես նաև տնտեսական և ժողովրդավարական զարգացման հարցում: Այս համբավն ամրապնդվում է Վրաստանի և Ռուսաստանի համար հովանավոր-պետության երկարաժամկետ լիազորություններով և **Բրետոն Վուդսի կառույցների ու Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ)՝ Շվեյցարիայի գլխավորած քվեարկության խմբում** Ադրբեջանի հետ ընդհանուր անդամակցությամբ: Այս գործընկերությունը նպաստում է ավելի հզոր և արդյունավետ բազմակողմ կառույցների ստեղծմանը:

Շվեյցարիան մեծ **տնտեսական շահեր** ունի Հարավային Կովկասում: Տնտեսական զարգացումը՝ տարածաշրջանի կայունության բարելավմանը և երկրների միջև ինտեգրման խորացմանը զուգահեռ **շուկայական և ներդրումային հնարավորություններ կստեղծի շվեյցարական ձեռնարկությունների համար** (օրինակ՝ ՏՏ, էներգետիկայի, շինարարության, դեղագործության, տրանսպորտի, զբոսաշրջության և ագրոբիզնեսի ոլորտներում) և թույլ կտա լիարժեք օգտվել ընթացիկ առևտրային և ներդրումային համաձայնագրերից: Տարածաշրջանում անվտանգության և խաղաղության հաստատմանն աջակցելու Շվեյցարիայի ջանքերի մեկ այլ պատճառ է նաև այն, որ կայունությունը տարածաշրջանում կերաշխավորի գազի և նավթի փոխադրումը խողովակաշարերով՝ դրանով իսկ ապահովելով Շվեյցարիայի **էներգետիկ անվտանգությունը**:

Շվեյցարիան շահագրգիռ է **բարելավելու** նաև **միգրացիայի կառավարումը**: Միջազգային համագործակցության շնորհիվ Շվեյցարիան օգնում է անդրադառնալ միգրացիայի հիմնական պատճառներին՝ բնակչությանը տալով իրենց իսկ երկրներում **կենսամակարդակը բարձրացնելու հնարավորություններ** և **կլիմայի փոփոխության** ու բնական այլ աղետների դեմ պայքարելու ավելի լավ միջոցներ: Միգրացիոն համագործակցության և **Վրաստանի հետ ակնկալվող միգրացիոն գործընկերության** հաստատման միջոցով Շվեյցարիան ցանկանում է նաև բարելավել միգրացիոն տեղաշարժերի կառավարման գործընթացները կանոնավոր երկխոսությունների և փոխշահավետ միջամտությունների միջոցով: Միգրացիոն նման գործընկերությունը օգտակար կլինի Շվեյցարական համագործակցության այս ծրագրին և կամրապնդի Շվեյցարիայի ներգրավվածությունը տարածաշրջանում:

Շվեյցարական համագործակցությունն առաջնորդվում է Շվեյցարիայի արտաքին քաղաքականության 2020–2023 թվականների ռազմավարությամբ և Շվեյցարիայի միջազգային համագործակցության 2021–2024 թվականների ռազմավարությամբ: Շվեյցարիայի **առարկայական փորձագիտական կարողությունները** լավ համապատասխանում են Հարավային Կովկասի երկրների զարգացման կարիքներին և առաջնահերթություններին՝ **2030 թվականի կայուն զարգացման օրակարգի** իրականացման առումով: Շվեյցարական գիտելիքներն ու փորձը (նոու-հաու) գնալով ավելի արժեքավոր են դառնում ներառական կառավարման և պետական ֆինանսների կառավարման, գործարար միջավայրի և ֆինանսական հատվածի զարգացման, տեղական տնտեսական զարգացման, ինչպես նաև ագրոբիզնեսի արժեշղթաների և զբոսաշրջության ամրապնդման համար, որոնք առանցքային են

դիվերսիֆիկացված (բազմազանեցված) տնտեսություններ կառուցելու համար:

Մասնագիտական ուսուցման կատարելագործման համար կարևոր է հենվել մասնագիտական կրթության և ուսուցման/աշխատանքի վրա հիմնված ուսուցման երկակի մոդելների վրա, ինչպես նաև պետական և մասնավոր հատվածի դերակատարների համակարգման մեխանիզմների վրա: Շվեյցարիան ունի առաջին կարգի հետազոտական հաստատություններ, որոնց մասնագիտական կարողությունները (մասնավորապես բնապահպանական գիտություններում) կարող են գործածվել ի շահ Հարավային Կովկասի տարածաշրջանի: Շվեյցարիայի **տարածաշրջանային մոտեցումը** բարձրացնում է համագործակցության մակարդակը: **Այս մոտեցումը բաղկացած է երկկողմ միջամտություններից, որոնց գումարվում են նաև բոլոր երեք երկրներին վերաբերող տարածաշրջանային միջամտությունները: Այն հնարավորություն է տալիս տարածաշրջանում երկխոսության խթանմանը:**

Կառավարությունները և այլ գործընկերները հետևողականորեն շեշտում են, որ Շվեյցարիան խթանում է համակարգային փոփոխությունները երկարաժամկետ ներգրավվածությամբ, չունի թաքնված օրակարգ և պահպանում է ծրագրի կառավարման **բարձր որակի չափանիշները**՝ միաժամանակ ցուցադրելով արագ հարմարվելու և արձագանքելու անհրաժեշտ **ճկունություն**, ինչն ապացուցվեց ՔՈՎԻԴ-19 ճգնաժամի ժամանակ: Օգտվելով ՄԱԿ-ի մշտական համակարգողի գլխավորած հարթակների ընձեռած հնարավորությունից՝ Շվեյցարիան Հարավային Կովկասում սերտորեն համաձայնեցնում է իր քայլերը **զարգացման այլ գործընկերների** հետ: Տարածաշրջանում գործող հիմնական գործընկերներից են ԵՄ-ն, ԱՄՆ-ն, Գերմանիան, Ճապոնիան, Շվեդիան, Նիդեռլանդները և Ավստրիան, ինչպես նաև ՄԱԿ-ի կազմակերպությունները (ՄԱԶԾ, ՄԱԿ Կանայք, ՅՈՒՆԻՍԵՖ, ՄԱԿ ՓԳՀ, ՄԱԿ ՊԳԿ և ԳՀՄՀ) և միջազգային ֆինանսական հաստատությունները (ՀԲԽ, ԱՄՀ, ԵՆԲ, ՎԶԵԲ և ԱԶԲ), ԵԱՀԿ-ն, Եվրոպայի խորհուրդը և ԿԽՄԿ-ն: Շվեյցարիան համագործակցության համար ամուր դաշինքներ ունի, մասնավորապես Ավստրիայի հետ, ինչը խթանում է համագործակցության արդյունավետությունը: ԵՄ գործընկերները Շվեյցարիային համարում են զարգացման ծրագրերում իրենց հետ համախոհ դերակատար:

# 3. 2017-2021 ժամանակահատվածի արդյունքներ և քաղված դասեր

2017–2021 թվականների ընթացքում Շվեյցարիան, մոտ 85 միլիոն շվեյցարական ֆրանկ բյուջե ունենալով, աշխատել է տարբեր գործընկերների հետ տարածաշրջանային և երկկողմ (բազմակողմ) մակարդակներում արդյունավետ ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման և խաղաղության խթանման բարեփոխումներին աջակցելու, ներառական տնտեսական աճին և կենսամակարդակի բարձրացմանը նպաստելու համար: Շվեյցարական միջամտությունների արդյունքները նշանակալի են և դրական ազդեցություն են ունեցել Հարավային Կովկասի ժողովուրդների կյանքում:



## 3.1. Տարածաշրջանային արդյունքներ

Տարածաշրջանային մակարդակում Շվեյցարիայի՝ **կանանց տնտեսական հզորացմանը** (ԿՏՀ) ցուցաբերած աջակցության շնորհիվ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում 1,150 կին աշխատանքի է տեղավորվել: Ադրբեջանում բացվեց կանանց երեք ռեսուրս կենտրոն, որտեղ առաջարկում են վերապատրաստման անվճար դասընթացներ: Բացի այդ, միջամտությունը խրախուսեց մասնավոր հատվածին ընդունելու Կանանց հզորացման սկզբունքները (ԿՀՍ)՝ այսպիսով խթանելով բիզնեսները՝ նպաստելու կանանց հզորացմանը աշխատավայրում, շուկայում և համայնքում: Տարածաշրջանի 15 մասնավոր ընկերություններ ընդունել են ԿՀՍ-ները:

Վրաստանի աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարության և Հայաստանի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ ձևավորված գործընկերությունների արդյունքում գնահատվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) համապատասխան կոնվենցիաների կարգավորող ազդեցությունը գենդերային հավասարությանը վերաբերող ազգային կարգավորիչ շրջանակների վրա՝ շահերի պաշտպանության և քաղաքական երկխոսության վերաբերյալ որոշում կայացնողներին իրազեկելու նպատակով: Միջամտության շնորհիվ նաև աշխատանք տարվեց ազգային վիճակագրական ծառայությունների հետ՝ հաշվարկելու աշխատավարձի գենդերային խզվածքը և քարտեզագրելու սոցիալական պաշտպանության ազգային նվազագույն նորմերը: Այս քայլերը կարևոր նշանակություն ունեցան աշխատանքային հարաբերություններում գենդերային անհավասարության բացահայտման և,



համապատասխանաբար, սոցիալական ապահովության հիմնական երաշխիքների սահմանման համար:

Տարածաշրջանային մակարդակում **կլիմայի փոփոխությանն** անդրադառնալու համար Շվեյցարիան աջակցեց բազմակի վտանգների քարտեզագրման մեթոդաբանության մշակմանը: Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) և տարածաշրջանում վտանգների քարտեզագրման վերաբերյալ հեռավար ուսուցման մոդուլն այժմ անգլերենով հասանելի է Վրաստանի Իլյայի պետական համալսարանում, թարգմանությունները՝ Հայաստանի և Ադրբեջանի գործընկեր համալսարաններում: 2019 թվականին անցկացված Կովկասյան լեռնային 2-րդ ֆորումը, որին մասնակցել է ավելի քան 150 անձ կովկասյան տարածաշրջանի 6 երկրներից, հաստատեց *2020–2030 թվականների Կովկասյան տարածաշրջանային հետազոտական օրակարգը*՝ որպես կատարված հետազոտությունների ընդհանուր շրջանակ:

**Արվեստի և մշակույթի** տարածաշրջանային ծրագիրը խիստ տպավորիչ արդյունքներ ունեցավ իր սոցիալական բազմապատկիչ ազդեցության շնորհիվ, մասնավորապես՝ ՔՈՎԻԴ-19 համավարակի ընթացքում: Ամառային դպրոցի մասնակիցները 10 վավերագրական ֆիլմ նկարահանեցին սոցիալական հարցերի վերաբերյալ. ավելի քան 20,000 մարդ մասնակցեց դիտումներին երեք երկրներում: Միջամտության շնորհիվ ստեղծվեց նաև շրջիկ լուսանկարչության թանգարան և 22 դրամաշնորհներ տրամադրվեց կին լուսանկարիչների սոցիալական նախագծերի համար: Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում լուսանկարչության թանգարանի 13 նիստ և Պատկերների Ֆաբրիկա (Պատկերների գործարան/Fabrika of Images) հարթակի 36 աշխատաժողով կազմակերպվեց գյուղական համայնքների բնակչության (հիմնականում երիտասարդների) համար: Հարավային Կովկասում 37 փոքրամասշտաբ մշակութային ծրագրեր փոքր դրամաշնորհային աջակցություն ստացան:

Տարածաշրջանային մակարդակով աշխատելիս **քաղված հիմնական դասն** այն է, որ այս ամենը ճկունություն և պրագմատիզմ է պահանջում. թեև միջամտության հավաքական նպատակը ընդհանուր է ողջ տարածաշրջանի համար, այնուամենայնիվ, գործողությունները պետք է համապատասխանեցվեն ազգային և տեղական համատեքստին: ՀԿ դերակատարների հետ համագործակցությունը և մարդկային դեմ առ դեմ շփումների խթանումը միջսահմանային աշխատանքի և ինտեգրման գործընթացների ամրապնդման հզոր միջոց են: Այնպիսի խնդիրները, ինչպիսիք են կանանց տնտեսական հզորացումը, աղետների ռիսկի նվազեցումը և կլիմայի փոփոխության վերաբերյալ հետազոտությունները, ավելի լավ են հասցեագրվում տեխնիկական մակարդակում՝ պահպանելու փոխշահավետությունը և հակամարտությունների նկատմամբ զգայունությունը: Նմանապես, արվեստը և մշակույթը, այդ թվում կինոն և լուսանկարչությունը, պարզվեց, որ արդիական են թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակչության՝ մարդու իրավունքների, հակամարտությունների, սեռի և միգրացիայի հետ կապված հարցերի լայն շրջանակի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու հարցում:

## 3.2. Երեք երկրների արդյունքները. արդյունավետ ժողովրդավարական կառույցներ, մարդկային ապահովություն և անվտանգություն

Հանրային ծառայությունների մատչելիությունն ու որակը բարձրացնելու և ժողովրդավարական կառավարումը խթանելու համար Շվեյցարիան սատարեց Հայաստանի և Վրաստանի կառավարություններին մշակել **ապակենտրոնացմանն** ուղղված քաղաքականությունների առանցքային փաստաթղթեր (օրինակ՝ ապակենտրոնացման ռազմավարություն, լեռնային շրջանների զարգացման ռազմավարություն և տեղական ինքնակառավարման օրենսդրություն): Շվեյցարական ծրագիրն աշխատել է նաև այս երկրների կառավարման կարողություններն ամրապնդելու ուղղությամբ՝ ներդնելով էլեկտրոնային կառավարման համակարգ, օգնելով մշակել զարգացման ծրագրեր և դասընթացներ կազմակերպելով համայնքապետարանների աշխատակիցների համար: Հայաստանի 52 և Վրաստանի 63 քաղաքապետարաններում Շվեյցարիայի կողմից ֆինանսավորվող միջամտությունները նպաստել են աշխատակիցների կարողությունների զարգացմանը: Հայաստանում և Վրաստանում ավելի քան 1,5 միլիոն քաղաքացի օգտվել է թափանցիկ և արդյունարար առցանց հանրային ծառայություններից:

Ադրբեջանում պետական ֆինանսների կառավարման ոլորտում կառավարության պետական պարտքի կառավարումն իրականացվում է Շվեյցարիայի տեխնիկական աջակցությամբ: Ավելին, նշանակալի արդյունքներ են ձեռք բերվել կառա-



վարության ֆինանսական վիճակագրության և մակրոտնտեսական կանխատեսումների կարողությունների զարգացման առումով: Շվեյցարիայի ֆինանսական աջակցությամբ Պետական հարկային ծառայությունը մշակեց և փորձարկեց **հարկային ծախսերը հաշվարկելու** նախատիպային մոդել: Մոդելը ներառում է հիմնական հարկային գործիքները՝ ավելացված արժեքի հարկ, կորպորատիվ և անձնական եկամտային հարկ և պարզեցված հարկ:

Հետևյալ հիմնական **դասերը քաղվեցին**.

1. Գուցե կարիք լինի ռազմավարական ուշադրությունը կենտրոնացնել տեղական ինքնակառավարման կամ ոչ կառավարական շահագրգիռ կողմերի վրա, մասնավորապես՝ աջակցելով քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ) և մասնավոր հատվածին՝ ամրապնդելու ներգրավվածությունը ավելի արդյունավետ քաղաքականության մշակման և տեղական տնտեսական զարգացման գործում:

2. Տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ) վճռորոշ դեր են խաղում ճգնաժամերի կառավարման գործում, ինչպես պարզ դարձավ ՔՈՎԻԴ-19 համավարակի ընթացքում, որը պահանջում է թե՛ կարճաժամկետ, թե՛ միջնաժամկետ արձագանքման քաղաքականություններ, ՏԻՄ կարողությունների բարելավում:

3. Կառավարման, մարդու իրավունքների և ժողովրդավարեցման գործընթացներում ներգրավվածությունը պետք է հանդիսանա երկարաժամկետ նպատակ, որին հասնելու ճանապարհին կլինեն բազմաթիվ հետընթացներ և միայն ժամանակի ընթացքում հնարավոր կլինի տեսնել արդյունքները:

4. Սերտ քաղաքական երկխոսությունը և վերահսկման մեխանիզմները, ընդհուպ մինչև ծրագրերի կասեցումը, երբ կանխորոշված նպատակները չեն իրականացվում, վճռական են զգալի բարեփոխումների առաջընթացն ապահովելու և փոփոխվող ձևաչափերի պայմաններին հարմարվելու համար:

**Վստահության ամրապնդման ծրագրերը, որոնք ներառում են Վրաստանը և իրենից անջատված տարածքները,** մասնավորապես կենտրոնացած էին ընտրությունների ժամանակ արդարության և թափանցիկության, փոքրամասնությունների ինտեգրման և մասնակցության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հետ երկխոսության վրա՝ աբխազական հակամարտության համատեքստում: Այս առումով մի շարք երկխոսությունների արդյունքում հրապարակումներ և առաջարկություններ եղան, ինչպես նաև իրականացվեցին որոշակի համատեղ միջկոնֆլիկտային խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ շրջակա միջավայրի, էներգետիկայի, մարդու իրավունքների և կրթության ոլորտներում: Վրաստանի իշխանությունները խաղաղության նոր նախաձեռնություն ներառեցին իրենց գործունեության մեջ, մասնավորապես փորձագետների ու քաղաքացիական հասարակության տարբեր առաջարկություններ առևտրի, էներգետիկայի և տնտեսական համագործակցության վերաբերյալ: **Քաղված կարևորագույն դասն** այն է, որ աշխատանքը հակամարտություններից տուժած շրջաններում ճկուն մոտեցում է պահանջում՝ հոգալու տեղական կարիքները և արձագանքելու ստեղծված հնարավորություններին՝ միևնույն ժամանակ չանտեսելով զգայուն քաղաքական միջավայրը: Հետևաբար, ծրագրի յուրաքանչյուր փուլում խիստ կարևոր է սերտ երկխոսությունը հակամարտության բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

## 3.3. Երեք երկրների արդյունքները. ներառական և կայուն տնտեսական զարգացում

Հայաստանում և Վրաստանում, որտեղ շվեյցարական ծրագիրը կենտրոնացած էր **գյուղատնտեսության** վրա, զարգացման գործընկերների



միջև **քաղաքական երկխոսությունը** բարելավեց անասնաբուժական ծառայությունների մատուցումը, սննդամթերքի անվտանգության ու որակի չափանիշները և արոտավայրերի կառավարումը: Նման միջոցառումների միջոցով ծրագիրն աջակցել է գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական 2,250 **աշխատատեղերի** ստեղծմանը (մոտ 30%-ը կանանց համար) և 10%-30%-ով ավելացրել 125,000 շահառուների զուտ **եկամուտը**: Ավելի քան 100 ՓՄՁ աջակցություն է ստացել կաթնամթերքի, մսի, բրդի և մեղրի արժեշղթաներում միջազգային չափանիշներին համապատասխան նոր ապրանքներ կամ ապրանքանիշեր ստեղծելու համար և այդպիսով բարելավել իրենց մուտքը դեպի գրավիչ շուկաներ իրենց երկրի ներսում և դրսում:

**Վրաստանում** շվեյցարական ծրագիրը նաև բարձրացրել է գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) որակը, մատչելիությունը և գրավչությունը՝ աջակցելով ՄԿՈՒ նոր օրենքի մշակմանը և գործադրմանը՝ հնարավորություն տալով մասնավոր հատվածին ավելի ակտիվ ներգրավվածություն ունենալ և ներդնել աշխատանքի վրա հիմնված ուսուցման եղանակը: Մոտ 5,000 երիտասարդ և մեծահասակ (որոնցից 33%-ը կանայք) մասնակցել են բարելավված երկարաժամկետ և կարճաժամկետ դասընթացներին, իսկիսկ 10,000 գյուղացիներ ստացել են գյուղատնտեսական գիտելիքների խորքային խորհրդատվական ծառայություններ: Գյուղատնտեսական ՄԿՈՒ դասընթացների շրջանավարտների 62%-ը (որոնցից 30%-ը կանայք) նոր աշխատանք են գտել, իսկիսկ ինքնազբաղված չափահաս գյուղացիների 70%-ը կիրառել է առաջադեմ տեխնիկաներ, որն օգնել է բարձրացնել իրենց արտադրողականությունը և եկամուտը:

**Ադրբեջանում** շվեյցարական ծրագիրը հիմնականում ուղղվածուղղված է եղել եղել գործարար միջավայրի բարելավմաննն ուու **ֆինանսների հասանելիությանը**: Նշանակալից ձեռքբերումներից են ֆինանսական երկու հաստատության ստեղծումը՝ մասնավոր վարկային բյուրոն (ՄՎԲ) և Շարժական ակտիվների գրանցամատյանը: Վերջինը նվազեցնում է գենդերային խզվածքը՝ օգնելով հող կամ այլ գույք չունեցող կանանց օգտվել վարկերից՝ այլընտրանքային գրավ դնելով: Ավելին, դրամական միջոցների հոսքերի հետ կապված գյուղատնտեսական ռիսկերի գնահատման գործիքի ներդրումն ու օգտագործումը զգալիորեն մեծացրել է ֆինանսավորման հասանելիությունը ագրոբիզնեսի համար:

**Քաղված հիմնական դասն** այն էր, որ շուկայական համակարգերի զարգացման (ՇՀԶ) մոտեցումը առանցքային նշանակություն ունի համապարփակ և հետևողական համակարգային փոփոխությունների և կայուն արդյունքների հասնելու համար: Մյուս դասն այն է, որ հատկապես կարևոր է ուշադրության կենտրոնում պահել մասնավորապես **գյուղատնտեսության** ոլորտը, քանի որ աղքատ և խոցելի խմբերի մեծ մասն աշխատում է այս ոլորտում: Ավելին, գյուղատնտեսական ծրագրերը խիստ արդյունավետ են եկամուտ-

ների ավելացման և զբաղվածության խթանման տեսանկյունից և այսպիսով նվազեցնում են միգրացիան և աղքատությունը: ՔՈՎԻԴ-19 համավարակը էլ ավելի ընդգծեց գյուղատնտեսության և պարենի կարևորությունը: Գյուղատնտեսությունն այն եզակի ոլորտներից մեկն էր, որը 2020 թվականին աճ գրանցեց՝ ի հեճուկս համավարակին: Այդուհանդերձ, 2020 թվականի նոյեմբերին Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրման հետևանքով գյուղացիները կարող են առերեսվել միջսահմանային լարվածության աճին: Սա կարող է ազդել գյուղատնտեսական արտադրանքի վրա:

Ընդհանուր առմամբ, **ՔՈՎԻԴ-19 համավարակը** տարածաշրջանի համար ստեղծել է բազմաթիվ մարտահրավերներ, որոնք պահանջում են հստակ գործողություններ: Հատկապես մտահոգիչ է բնակչության զգալի մասը կազմող խոցելի խմբերի սոցիալ-տնտեսական անկայուն վիճակը: Համավարակն ընդգծել է հետևյալ կարիքները. ա) հզորացնել գյուղատնտեսական արտադրողների և ՓՄՁ-ների կարողությունները, բ) զարգացնել կառավարությունների կարողությունները տնտեսական բարեփոխումներում և գ) բարելավել խոցելի խմբերի համար տեղեկատվության, տնտեսական ռեսուրսների և քաղաքական ինստիտուտների հասանելիությունը՝ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով:

Ի վերջո, **սիներգիաները** ընդլայնեցին ազդեցության գոտին: Տնտեսական և կառավարման ոլորտների ոլորտների միջամտությունները, օրինակ, ուժերի միավորմամբ և փորձագիտության համատեղմամբ, հաջողություն են գրանցել քաղաքային մակարդակում տվյալների հավաքագրման և կառավարման, արոտավայրերի կայուն կառավարման (Հայաստանի քաղաքապետարանների և ֆերմերների միջև լավ համագործակցությամբ) և տնտեսական հնարավորություններից օգտվելու գործում:

# 4. 2022–2025 թվականների համագործակցության ծրագրի եզրահանգումներ

17–2021 թվականների ընթացքում Շվեյցարական համագործակցության ծրագիրը Հարավային Կովկասի համար խոստումնալից արդյունքներ է գրանցել: Հաշվի առնելով վերոնշյալ բաժիններում նկարագրված համատեքստը և քաղված դասերը, ինչպես նաև Շվեյցարիայի միջազգային համագործակցության 2021–2024 թվականների ռազմավարության առաջնահերթությունները՝ **Շվեյցարական համագործակցության ծրագիրն իր գործողությունները կհամապատասխանեցնի** հետևյալ կերպ.



Շվեյցարիան **կամրապնդի իր տարածաշրջանային մոտեցումը՝ վստահություն ձևավորելու** և **խաղաղ, ներառական ու դիմակայուն հասարակություններ կերտելու** համար: Երկխոսությանը, մտքերի փոխանակմանը և տեխնիկական լուծումներին նպաստող միջամտությունների միջոցով ծրագիրը կխրախուսի տարածաշրջանային համագործակցությունը և կխթանի խաղաղությունը: Այս ջանքերն ուղղված են լինելու միջոլորտային ասպեկտներին, որոնք փոխադարձ հետաքրքրություն են ներկայացնում բոլոր երեք երկրների համար և հանդիսանում են **տեխնիկական մեկնարկային կետեր**, ինչպիսիք են տնտեսական համագործակցությունը (հիմնականում միջսահմանային առևտուրը), կանանց հզորացումը, կլիմայի փոփոխությանը հարմարվողականությունը, բնապահպանական խնդիրները և միջմշակութային երկխոսությունը:

Շվեյցարիան արդեն իսկ մի շարք **տարածաշրջանային միջամտություններ** է իրականացնում այս ոլորտներում: Հանրային խոսույթում (դիսկուրսում) խոցելի խմբերի ձայնին ավելի շատ հնչեղություն տալու համար Շվեյցարիան կընդլայնի արվեստի և մշակույթի իր ծրագրի զարգացման հեռանկարը: Այդ նպատակով միջամտությունների ընթացքում այն հետևողականորեն կներդնի և կխթանի այնպիսի արժեքներ, ինչպիսիք են սոցիալական ներառումը, մշակութային բազմազանությունը և փոխադարձ հարգանքը տարածաշրջանում: Տարածաշրջանում կանանց հզորացմանը հետագայում աջակցելու համար շվեյցարական միջամտությունները կշարունակեն հիմնարար վերլուծական աշխատանքները այս ոլորտում և այդ վերլուծությունների արդյունքները լայնորեն հասանելի կդարձնեն իրազեկման, հանրային քննարկումների և քաղաքականության մշակման համար:

Շվեյցարական ծրագիրը կփորձի ընդլայնել երկխոսությունը և համատեղ գործողությունները մասնավոր հատվածի հետ և մեծացնել կանանց

ներգրավվածությունը տեղական և ազգային քաղաքականության մեջ: Շարունակվելու են տարածաշրջանային քննարկումները կլիմայի հետ կապված հարցերի շուրջ: Տարածաշրջանային մոտեցումը կատալիզացնելու է **երկկողմ միջամտությունների** ներկա բազմակողմ պորտֆելը: Դա կիրականացվի՝ հիմնվելով առկա մեկնարկային կետերի վրա, բացահայտելով նորերը՝ հետագա կապեր և համագործակցություն հաստատելու նպատակով:

**Ոչ կառավարական դերակատարների**, ինչպիսիք են քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և լրատվամիջոցները, ինչպես նաև մասնավոր հատվածի և ակադեմիական հաստատությունների հետ համագործակցությունը և մարդկային դեմ առ դեմ շփումները հիմք կհանդիսանան տարածաշրջանային մոտեցման ինտեգրման գործընթացների համար:

Ժողովրդավարական գործընթացներում հակամարտությունների լուծման ոչ բռնի մեխանիզմների խթանումը և ազգային ու կրոնական փոքրամասնությունների մասնակցությունն ու ինտեգրումը ընդլայնելը ավելի կամրապնդի հասարակությունների դիմակայունությունը: Վրաստանի կառավարության և Վրաստանից անջատված Աբխազիայի հարաբերությունները որոշակի հնարավորություն են ապահովում՝ **վստահության ամրապնդմանը** և **հակամարտությունների լուծմանն** ուղղված նախաձեռնությունների համար: Շվեյցարիան կշարունակի օգտագործել հակամարտությունների լուծմանը նպաստելու հնարավորությունները որպես հուսալի և վստահելի գործընկեր: Նման հնարավորություններից են եռաթև սիներգիաների խրախուսումը՝ ուղղված մի կողմից խաղաղության խթանմանը, մյուս կողմից՝ ջրի, սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման և գյուղատնտեսության ոլորտի զարգացման միջամտություններին:

Տարածաշրջանի յուրաքանչյուր երկրում կրթված և ակտիվ քաղաքացիները, ինչպես նաև կայուն հաստատությունները կծառայեն որպես Շվեյցարիայի գործողությունների հիմնաքար՝ **ուղղված ներառական կառավարման, կայուն աճի, խաղաղության և դիմակայունության խթանմանը**: Ժողովրդավարության, օրենքի գերակայության, տնտեսական կառավարման, մարդու իրավունքների և գենդերային հավասարության ամրապնդումը կմնան որպես հիմնարար սկզբունքներ այս ոլորտներում: Չափազանց կարևոր կլինի նաև շարունակել երկարաժամկետ ներգրավվածու-



թյունը տարածքային և ապակենտրոնացման բարեփոխումներում: Բացի այդ, անհրաժեշտ է ավելի հզորացնել տեղական հարկաբյուջետային և քաղաքական իրավասությունները և բարելավել ծառայությունների մատուցումը:

Շուկայի զարգացման աճը խթանելով՝ շվեյցարական ծրագիրը կնպաստի բնական ռեսուրսների, ինչպես օրինակ անտառների, կայուն օգտագործմանը: Այս գործողություններում հաջողության հասնելու հիմնական պայմաններից են մասնավոր կապիտալի հասանելիության բարելավումը և գյուղատնտեսության ու դրան առնչվող ոլորտների կարիքները բավարարող մասնագիտական կրթության համակարգի զարգացումը: Կայուն տնտեսական աճի հաջորդ հրամայականը ներքին ռեսուրսների մոբիլիզացումն է:

Հարավային Կովկասի տարածաշրջանի եզակի բնական կապիտալին սպառնում են կլիմայի փոփոխությունը և այնպիսի գործողությունների ազդեցությունը, ինչպիսիք են ենթակառուցվածքների լայնածավալ զարգացումը և արդյունահանող զանազան ոլորտները: **Կլիմայական փոփոխությունների հետ կապված գործողությունները և ռեսուրսների կայուն կառավարումը խրախուսելու համար Շվեյցարիան կընդլայնի իր ներկայիս** ծրագիրը՝ ինչպես հայեցակարգային, այնպես էլ տեղում իրականացվող գործողությունների առումով:

Շվեյցարական ծրագիրը բնական ռեսուրսների կայուն կառավարման և տնտեսական աճի միջոցով կամրապնդի կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության, ինչպես նաև կենսաբազմազանության և շրջակա միջավայրի պաշտպանության միջև փոխկապակցվածությունը: Այս ջանքերին նպաստելու համար այն կշարունակի բարձրորակ տեղեկատվություն և վերլուծություն տարածել, ինչպես նաև կիսվել ռեսուրսների կայուն կառավարման լավագույն փորձով:

Հիմնական նպատակներն են. ա) ստեղծել բարենպաստ քաղաքական միջավայր և (բ) հզորացնել կառավարությունների և այլ շահագրգիռ կողմերի ինստիտուցիոնալ կարողությունները քաղաքականությունների մշակման և իրականացման հարցում:

# 5. Ռազմավարական կողմնորոշումն ու Շվեյցարիայի առաջնահերթությունները 2022–2025 թվականների համար

*Հարավային Կովկասի համար 2022-2025 թվականների շվեյցարական համագործակցության ծրագրի* ***ընդհանուր նպատակը*** *հետևյալն է. տարածաշրջանի մարդիկ օգտվում են կայուն և ներառական տնտեսական ու սոցիալական զարգացման, ժողովրդավարական հասարակական ինստիտուտների, մարդկային անվտանգության, խաղաղության և կլիմայի փոփոխության նկատմամբ բարձր դիմակայունությունից տարածաշրջանային երկխոսության և համագործակցության շնորհիվ:*

Շեշտը դնելով հետևողականության և սիներգիայի վրա՝ շվեյցարական ծրագիրը կշարունակի աշխատել **զարգացման սահմանափակ թվով ծրագրերի** ուղղությամբ՝ կառավարում և խաղաղություն, տնտեսական զարգացում, շրջակա միջավայր և կլիմայի փոփոխություն: Այս թեմատիկ ոլորտներում շվեյցարական ծրագիրը կխրախուսի այն նախաձեռնությունները, որոնք և՛ ընդգրկում են տարածաշրջանը որպես ամբողջություն, և՛ ստեղծում կամ ամրապնդում են կապերը երեք երկրների միջև: Այսպիսով, շվեյցարական ծրագիրը պետք է կհետևի **4 պորտֆելների վերջնարդյունքների իրագործմանը**, որոնցում երկկողմ (բազմակողմ) և տարածաշրջանային քաղաքականությունների նպատակները համահունչ կլինեն Շվեյցարիայի միջազգային համագործակցության 2021–2024 թվականների ռազմավարությանը (տես Գծապատկեր 1. Արդյունքների շրջանակի կարճ ակնարկը ստորև և Հավելված 2. Փոփոխության տեսություն):

Շվեյցարիան որդեգրում է **աղքատության կրճատման, գենդերային հավասարության և սոցիալական ներառման համակարգված մոտեցում**: Ոչ ոքի չանտեսելու (ՈՈՉԱ) նպատակով շվեյցարական միջամտությունները **ուղղված** կլինեն որոշ **անտեսված** խմբերի, ինչպիսիք են կանայք և երիտասարդները, փոքրամասնությունները և գյուղական բնակչությունը՝ շեշտը դնելով նրանց կարողությունների զարգացման, կրթության, քաղաքական ներկայացվածության և տնտեսական հնարավորությունների հետ կապված հատուկ կարիքների վրա: Այդ ամենին հասնելու ծանրակշիռ ռազմավարություններ մշակելիս շվեյցարական ծրագիրը ճկուն մեթոդներով ավելի լավ կհամապատասխանեցվի նաև ՔՈՎԻԴ-19 համավարակի պատճառով բացահայտված սոցիալ-տնտեսական խոցելիություններին:

Գենդերն ու լավ կառավարումը դիտարկվելու են որպես **առանցքային թեմաներ**: Բացի այդ, շվեյցարական ծրագիրը պարբերաբար կդիտարկի իր միջամտությունների թողած ու կրած ազդեցությունները միգրացիայի, շրջակա միջավայրի, թվայնացման գործընթացի և լրատվամիջոցների վրա՝ որպես պորտֆելի հիմնական թեմաներ: Հարմարվողական կառավարման գործելակերպի (պրակտիկայի) համաձայն շվեյցարական ծրագիրը կմեղմացնի համատեքստային փոփոխությունների հետևանքով ծագող հնարավոր բացասական զարգացումները՝ միաժամանակ ավելացնելով միջամտությունների ազդեցությունը բոլոր հնարավոր ոլորտներում, օրինակ՝ աշխատելով ԶԼՄ-ների հետ բարեփոխումների մասին հաղորդակցությունը բարելավելու նպատակով:

| | | | |
|---|---|---|---|
| **Համագործ. ծրագրի նպատակ** | Հարավային Կովկասի տարածաշրջանում բնակվող մարդիկ օգտվում են կայուն և ներառական տնտեսական և սոցիալական զարգացման, ժողովրդավարական հասարակական ինստիտուտների, մարդկային անվտանգության, խաղաղության և կլիմայի փոփոխության նկատմամբ բարձր դիմակայունության առավելություններից, որոնք ձեռք են բերվում տարածաշրջանային երկխոսության և համագործակցության միջոցով: | | |
| **Միջազգային համագործ. ռազմավ. ենթանպ.** | ԵՆ 8 Հակամարտությունների կանխում, խաղաղության խթանում և միջազգային իրավունքի նկատմամբ հարգանքի ձևավորում<br>ԵՆ 9 Մարդու իրավունքների և գենդերային հավասարության ամրապնդում և խթանում<br>ԵՆ 10 Արդյունավետ կառավարման և օրենքի գերակայության խթանում, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ամրապնդում | ԵՆ 1 Շուկաների հասանելիության համար բազային պայմանների ապահովում և տնտեսական հնարավորությունների ստեղծում<br>ԵՆ 2 Մասնավոր հատվածի նորարարական նախաձեռնությունների խթանում՝ արժանապատիվ աշխատատեղերի ստեղծումը դյուրացնելու համար | ԵՆ 3 Կլիմայի փոփոխություն և դրա ազդեցություն<br>ԵՆ 6 Աղետների կանխում և վերակառուցման ու վերականգնման ապահովում |
| **Շվեյցարական ծրագրի վերջնարդ. (ՇԾՎ)** | ՇԾՎ 1. Հարավային Կովկասի հասարակական կազմակերպությունները (ՀԿ) և մարդիկ, ներառյալ՝ հակամարտություններից տուժած բնակչությունն ու փոքրամասնությունները, մասնակցում են ազգային քաղաքականությունների խոսույթին (դիսկուրսին), պաշտոնական որոշումների կայացմանը և տարածաշրջանային գիտելիքների ստեղծմանը, ինչպես նաև կայուն տնտեսական զարգացմանը և խաղաղ, ներառական ու դիմակայուն հասարակությունների ձևավորմանը, վստահության ամրապնդմանը և երկխոսությունը խթանող համատեղ գործողություններին: | | |
| | ՇԾՎ 2. Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում ազգային և տեղական մակարդակներում պետական հաստատությունները գնալով ավելի արդյունավետ են դառնում, ներառական և հաշվետու բոլոր քաղաքացիների և իրավատերերի հանդեպ. այդ հաստատությունները գործում են մարդու իրավունքների և օրենքի գերակայության սկզբունքների հիման վրա: | ՇԾՎ 3. Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում ՓՄՁ-ները և գյուղարտադրողները եկամուտ են ստանում և աշխատատեղեր ստեղծում՝ գործելով բարենպաստ բիզնես միջավայրում և օգտվելով հմուտ աշխատուժի, բազմազանեցված շուկաների և ծառայությունների, ինչպես նաև ֆինանսավորման հասանելիությունից: | ՇԾՎ 4. Ազգային և տեղական կառավարությունները, ՔՀԿ-ները, ակադեմիական և մասնավոր հատվածի դերակատարները Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում բարելավում են շրջակա միջավայրի հետ կապված արդյունքները կլիմայի փոփոխությանն ուղղված գործողությունների և ռեսուրսների կայուն կառավարման միջոցով՝ միաժամանակ մասնակցելով տարածաշրջանային փոխանակման հարթակների միջոցառումներին, նպաստելով համաշխարհային բնապահպանական քաղաքականություններին և առաջնահերթություններին: |
| | Միգրացիան, շրջակա միջավայրը, թվայնացման գործընթացը և լրատվամիջոցները դիտարկվում են որպես պորտֆելի հիմնական թեմաներ: | | |
| | Լավ կառավարումը, գենդերն ու սոցիալական ներառումը դիտարկվում են որպես առանցքային թեմաներ: | | |

*Գծապատկեր 1. Արդյունքների շրջանակի կարճ ակնարկ*

## 5.1. Տարածաշրջանում քաղաքացիական ներգրավվածության և քաղաքացիական տարածքի, ինչպես նաև համագործակցության պաշտպանություն և խթանում



*Շվեյցարական պորտֆելի վերջնարդյունք 1. Հարավային Կովկասի հասարակական կազմակերպությունները (ՀԿ) և մարդիկ, ներառյալ՝ հակամարտություններից տուժած բնակչությունն ու փոքրամասնությունները, մասնակցում են ազգային քաղաքականությունների խոսույթին (դիսկուրսներին), պաշտոնական որոշումների կայացմանը և տարածաշրջանային գիտելիքների ստեղծմանը, ինչպես նաև կայուն տնտեսական զարգացմանը և խաղաղ, ներառական ու դիմակայուն հասարակությունների ձևավորմանը, վստահության ամրապնդմանը և երկխոսությունը խթանող համատեղ գործողություններին:*

Պորտֆելի այս վերջնարդյունքը նորարարական է. այն արտացոլում է շվեյցարական ծրագրի տարածաշրջանային մոտեցումը, որն ընդգրկում է բոլոր միջամտությունների միջսահմանային ազդեցությունները, ներառյալ ինտեգրման գործընթացները խթանող երկկողմ (բազմակողմ) մակարդակներում իրականացվող միջամտությունները: Թիրախները և արդյունքները չափվելու են տարածաշրջանային մակարդակով ստույգ ցուցանիշներով:



ՔՀԿ-ները պայքարում են ձայն ունենալու, երկխոսության և տեղեկատվության փոխանակման մեջ ներգրավվելու և պետական կառույցների նկատմամբ իրենց հանրային վերահսկողության դերը կատարելու, ինչպես նաև հակամարտությունների կարգավորման ռազմավարություններ ձևավորելու համար: Անկողմնակալություն պահպանելու համար լրատվամիջոցները լուրջ սպառնալիքների են ենթարկվում: Լրատվամիջոցների անկողմնակալության գործոնը բախվում է աճող սպառնալիքներին: Շվեյցարական ծրագիրն ավելի ինտենսիվ կաշխատի քաղաքացիական հասարակության տարածքում, քաղաքացիական հասարակության հետ:

Կանայք և տղամարդիկ, ներառյալ՝ հակամարտությունից տուժած բնակչությունը և փոքրամասնությունները, կկարողանան մասնակցել վստահության ամրապնդմանը, երկխոսությանը և հանրային խոսույթին՝ ազդելով իրենց անվտանգությանը, բարեկեցությանը և մարդու իրավունքներին առնչվող քաղաքականությունների վրա: Նրանք իրավասու կլինեն վիճարկելու հնացած գենդերային նորմերը և տարբեր սահմանափակող գործելակերպերը, որոնք ազդում են իրենց քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավունքների վրա և կնպաստեն հակամարտությունների կարգավորմանը: Վերջնարդյունք 1-ի ավելի ստույգ նպատակներն են.

- → **Կանանց հզորացում**՝ նպաստավոր քաղաքականությունների և օրենսդրական միջավայր ստեղծելու, գենդերային հավասարության հարցերով զբաղվող ազգային կառույցների և տեղական գործընկերների կարողությունները զարգացնելու և կանանց ու տղամարդկանց հավասարապես ներգրավելու հարցում մասնավոր հատվածին խրախուսելու միջոցով:
- → **Ժողովրդավարության և ժողովրդավարական արժեքների ամրապնդում**՝ միջմշակութային երկխոսության և փոխանակումների միջոցով բազմակարծիք, նորարար և մասնակցային մշակութային հատվածի խթանում:
- → «Հասարակությունը որպես մի ամբողջություն» մոտեցման խթանում և կառավարության ու ՔՀԿ-ների միջև համապատասխան խորհրդատվական մեխանիզմների ամրապնդում ազգային և կրոնական փոքրամասնությունների **ինտեգրման և մասնակցության** միջոցով:
- → ՔՀԿ-ների մասնակցության խթանում **վստահության ամրապնդման և երկխոսության** հարցում և նրանց ներգրավումը կառավարությունների կողմից հակամարտությունների կարգավորման ռազմավարությունների ձևավորման գործում:
- → Արտադրական գործոնների (ներառյալ ապրանքները և մարդիկ) տարածաշրջանային հոսքի, գաղափարների և տեղեկատվության, ինչպես նաև **հնարավորություններից բխող միջսահմանային առևտրի** խթանում:
- → **Տարածաշրջանային հասանելիություն ունեցող կազմակերպչական գործընկերությունների** սատարում ցանցերի, հարթակների, համընկերությունների (կոնսորցիումների) և այլ կազմակերպությունների միջոցով:
- → Անկախ լրատվամիջոցների և խոսքի ազատության սատարում:

## 5.2. Ժողովրդավարության և պետական ինստիտուտների հզորացում

*Շվեյցարական պորտֆելի վերջնարդյունք 2. Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում ազգային և տեղական մակարդակներում պետական հաստատությունները գնալով ավելի արդյունավետ են դառնում, ներառական և հաշվետու բոլոր քաղաքացիների և իրավատերերի հանդեպ. այդ հաստատությունները գործում են մարդու իրավունքների և օրենքի գերակայության սկզբունքների հիման վրա:*

Ժողովրդավարական բարեփոխումները դանդաղ են ընթանում՝ զգալի հետընթացով, ինստիտուտների նկատմամբ վստահության անկումով և ավելի ու ավելի բևեռացված քաղաքականությամբ:




ՔՈՎԻԴ-19 համավարակի հետ կապված ծախսերը լրացուցիչ ճնշում են գործադրել պետական բյուջեների վրա: Անարդյունավետ դատական համակարգը չի կարողացել զսպել աճող կոռուպցիան կամ ստվերային և անօրինական տնտեսական գործունեությունը, ինչը հանգեցնում է բռնության, լարվածության և աճող մարգինալացման: Մարդու իրավունքները նույնպես ենթարկվում են հավելյալ ճնշումների:

Ազգային և տեղական մակարդակներում ավելի թափանցիկ և ներառական հասարակական հաստատությունները ավելի հաշվետու կդառնան իրենց քաղաքացիների հանդեպ, ավելի արդյունավետ կիրականացնեն իրենց գործառույթները և տեղական որոշումների կայացման մեջ կներգրավեն հասարակական շահագրգիռ կողմերին և քաղաքացիական հասարակությանը: Վերջնարդյունք 2-ի ավելի ստույգ նպատակներն են.

- **Պետական ֆինանսների կառավարումը դարձնել ավելի արդյունավետ**, կանխատեսելի և կայուն՝ միաժամանակ ավելացնելով բյուջետային գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, հզորացնելով պարտքի կառավարումը և կայունացնելով ֆինանսական հատվածը:
- **Խթանել տեղական ժողովրդավարական կառավարումը**, մասնակցությունը և հաշվետվողականությունը՝ աջակցելով տեղական խորհուրդներին և խթանելով ակտիվ քաղաքացու գործելակերպը (ներառելով կանանց, փոքրամասնություններին և անտեսված խմբերին):
- Տեղական քաղաքական, վարչական և տնտեսական զարգացման համար ձգտել **պետական և տարածքային մակարդակով բարեփոխումների/ապակենտրոնացման**:
- Խրախուսել մասնակցային **ժողովրդավարությունը, մարդու իրավունքների** վրա հիմնված մոտեցումները և **օրենքի գերակայության** բարեփոխումները՝ կոռուպցիան զսպելու, տեղական ժողովրդավարությունը, մասնակցությունը և հաշվետվողականությունը, ներառյալ խորհրդարանի նկատմամբ հանրային վերահսկողությունը խթանելու համար:
- Հզորացնել **ժողովրդավարական գործընթացները** և հակամարտությունների ոչ բռնի լուծման մեխանիզմները:




## 5.3. Տնտեսական զարգացման բարելավում և արժանապատիվ աշխատատեղերի ստեղծում

*Շվեյցարական պորտֆելի վերջնարդյունք 3. Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում ՓՄՁ-ները և գյուղարտադրողները եկամուտ են ստանում և աշխատատեղեր ստեղծում՝ գործելով բարենպաստ բիզնես միջավայրում և օգտվելով հմուտ աշխատուժի, բազմազանեցված շուկաների և ծառայությունների, ինչպես նաև ֆինանսավորման հասանելիությունից:*

Տարածաշրջանի՝ հետքովիդային վերականգնման անհրաժեշտությունը լուրջ մարտահրավերներ է ստեղծում, բայց կարող է նաև հնարավորություններ ստեղծել տնտեսության բազմազանեցման (դիվերսիֆիկացման) և թվայնացման համար՝ ստեղծելու բարենպաստ բիզնես միջավայր, ինչպես նաև արդյունարար և

արդար հարկային կառուցվածք: ՓՄՁ-ները, կանայք, երիտասարդները և գյուղարտադրողները պահանջում են շուկաների և ֆինանսների ավելի մեծ հասանելիություն, որպեսզի կարողանան բազմազանեցնել արտադրությունը. նաև ավելի լավ մասնագիտական կրթության և վերապատրաստման կարիք ունեն՝ աշխատանքային հմտությունները բարելավելու, արժանապատիվ աշխատատեղեր ստեղծելու և արտագաղթի հոսքերը նվազեցնելու համար:

Տնտեսական վերականգնումը, դիմակայունությունը և բարեփոխումները խթանելու համար Շվեյցարական համագործակցության ծրագիրը կխթանի կլիմակայուն եկամուտների և զբաղվածության հնարավորությունների ստեղծումը, հատկապես գյուղական վայրերում, զբոսաշրջության և գյուղատնտեսության նոր արժեշղթաներում: Ծրագրի նպատակն է նաև ստեղծել առողջ մակրոտնտեսական պայմաններ, բարենպաստ բիզնես միջավայր և բարելավել ռեսուրսների, շուկաների և հմուտ աշխատուժի հասանելիությունը: Վերջնարդյունք 3-ի ավելի ստույգ նպատակներն են.

→ Բարելավել անասնաբուծության վրա հիմնված գյուղատնտեսությունը՝ **զարգացնելով լրացուցիչ արժեշղթաներ** (օրինակ՝ գյուղական զբոսաշրջությունը), բարելավելով արտադրության հիմնական ներդրանքն ու արտադրանքը (օրինակ՝ կեր, միս, կաշի և բուրդ) և ապահովելով մասնագիտական կրթություն և ուսուցում գյուղատնտեսության ոլորտում (այսինքն՝ դուալ կրթություն): Գործողությունները կինտեգրեն շրջակա միջավայրի և կլիմայի հետ կապված գործողություններ:

→ Ընդլայնել **մակրոտնտեսական պլանավորման** (ներառյալ հարկաբյուջետային քաղաքականության և ռիսկերի վերլուծության) պետական ներդրումների կառավարման **կարողությունները**՝ ռազմավարական տեսանկյունից տվյալ երկրի կարիքներին համաձայն:





→ **Բարձրացնել ֆինանսավորման հասանելիությունը** (օրինակ՝ բանկային վարկեր) ՓՄՁ-ների և տեղական արտադրողների համար՝ բարելավելով նրանց ֆինանսական գրագիտությունն ու կառավարման կարողությունները, միաժամանակ մեծացնելով շուկաների հասանելիությունը և նվազեցնելով իրենց գործառնական ծախսերը՝ այդպիսով ստեղծելով ավելի լավ ներդրումային և **բիզնես միջավայր**:

→ **Փակել հմտությունների և աշխատաշուկայի կարիքների միջև առկա բացը**՝ ուժեղացնելով մասնավոր հատվածի դերը ՄԿՈւ համակարգում (օրինակ՝ ուսումնական ծրագրերի մշակում, չափանիշների սահմանում, վերապատրաստումների և ուսանողների քննությունների կազմակերպում) և հզորացնելով պետական-մասնավոր հատվածի համակարգող մարմիններն ու մեխանիզմները ՄԿՈւ ոլորտում:

→ **Հզորացնել տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կարողությունները** տեղական տնտեսական զարգացման հնարավորություններ ստեղծելու համար՝ միաժամանակ խթանելով գյուղական բնակչության (մասնավորապես կանանց) մասնակցությունը ՏԻՄ-երի որոշումների կայացմանը և բարձրացնելով հանրային ծառայությունների արդյունավետությունն ու թափանցիկությունը թվայնացման միջոցով:

→ **Ստեղծել զբաղվածության և եկամուտների**

**գեներացման նոր հնարավորություններ** արտագաղթը նվազեցնելու համար:

## 5.4. Կլիմայի դիմակայունության բարձրացում և ռեսուրսների կայուն կառավարում

*Շվեյցարական պորտֆելի վերջնարդյունք 4. Ազգային և տեղական կառավարությունները, ՔՀԿ-ները, ակադեմիական և մասնավոր հատվածի դերակատարները Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում բարելավում են շրջակա միջավայրի հետ կապված արդյունքները կլիմայի փոփոխությանն ուղղված գործողությունների և ռեսուրսների կայուն կառավարման միջոցով՝ միաժամանակ մասնակցելով տարածաշրջանային փոխանակման հարթակների միջոցառումներին, նպաստելով համաշխարհային բնապահպանական քաղաքականություններին և առաջնահերթություններին:*

Տարածաշրջանի բնական ռեսուրսները (ջուր, անտառներ և կենսաբազմազանություն) կայուն կերպով չեն կառավարվում, և դա մեծացնում է բնական աղետների վտանգը: Բնապահպանական մարտահրավերներին դիմակայելու հանձնառությունը տուժում է: Ավելին, որոշումների կայացման հարցում հասարակության մասնակցությունը ապահովելու համար առկա են սահմանափակ կառավարման մեխանիզմներ կամ միջոցներ, ինչը կխթաներ շրջակա միջավայրի պաշտպանությունը՝ միջազգային բնապահպանական համաձայնագրերին համապատասխանելու նպատակով:

Խրախուսելու համար կլիմայի փոփոխությանն ուղղված գործողությունները, շրջակա միջավայրի պահպանումն ու պաշտպանությունը, շվեյցարական ծրագիրը կընդլայնի իր ներգրավվածությունը ռեսուրսների կայուն կառավարման գործում՝ լեռնային շրջաններում կայուն տնտեսական աճի ինտեգրված մոտեցմամբ: Այս ջանքերին աջակցելու համար ծրագիրը կշարունակի բարձրորակ տեղեկատվություն տրամադրել սեփական վերլուծությունների արդյունքների մասին և կիսվել ռեսուրսների կայուն կառավարման լավագույն փորձով հետևյալ նպատակով. (ա) ստեղծելու բարենպաստ քաղաքական միջավայր և (բ) հզորացնելու կառավարության և այլ շահագրգիռ կողմերի ինստիտուցիոնալ և քաղաքականությունների մշակման ու իրականացման կարողությունները: Կառավարությունները, քաղաքացիները և մասնավոր հատվածի դերակատարները կպաշտպանեն և կայուն կերպով կօգտագործեն իրենց բնական ռեսուրսները՝ միաժամանակ նպաստելով կայուն զարգացմանը միտված համաշխարհային քաղաքականություններին: Վերջնարդյունք 4-ի ստույգ նպատակներն են.

- **Բարձրացնել խոցելի խմբերի, համայնքների և տարածաշրջանների դիմակայունությունը** կլիմայի հետ կապված սպառնալիքների և բնական աղետների հանդեպ այնպիսի միջոցառումների միջոցով, որոնք ներառում են բազմավտանգ ռիսկերի քարտեզագրման, մշտադիտարկման, մոդելավորման և կանխատեսման ազգային համակարգերի ստեղծումը:
- Ակտիվացնել գործողությունների վրա հիմնված հետազոտությունները, քաղաքականությունների վերաբերյալ խորհրդատվական աշխատանքը և համալսարանական ուսումնական ծրագրերի մշակումը՝ կապված **կլիմայի փոփոխության և աղետների ռիսկի նվազեցման հետ**:
- **Կլիմայի փոփոխության** և **կենսաբազմազանության** օրակարգերը կապել տնտեսական աճի հետ:
- Խրախուսել գիտնականների աշխատանքը և ՔՀԿ-ների՝ **փաստահեն քաղաքականությունների մշակումը և պրոպագանդան** տարածաշրջանում կլիմայի փոփոխության հարմարվողականության և լեռների կայուն զարգացման հետ կապված հարցերի շուրջ՝ միաժամանակ խթանելով միջսահմանային տեխնիկական համագործակցությունը կլիմայի փոփոխության հարմարվողականության հարցում:
- Աջակցել տեղական իշխանություններին և քաղաքացիներին՝ որդեգրելու **ռեսուրսների կայուն կառավարման** գործելակերպեր, հատկապես անտառների պարագայում, և ստեղծել եկամուտների կայուն բազմազանեցման հնարավորություններ:

# 6. Ծրագրի կառավարում և իրականացում

Հարավային Կովկասի համար շվեյցարական համագործակցության 2022-2025 թվականների ծրագիրը համատեղ կիրականացնեն շվեյցարական կառավարության մի քանի դերակատարներ՝ ՇԶՀԳ-ն, ՇՏՊՔ-ն և Խաղաղության և մարդու իրավունքների բաժինը (ԽՄԻԲ): Շվեյցարիան դեսպանություններ ունի Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում: Բոլոր երեք երկրներում միջազգային համագործակցության թիմերը (որոնք լիովին ինտեգրված են դեսպանատներին և գործում են որպես տարածաշրջանային համագործակցության մեկ միասնական թիմ) կուղղորդեն և կվերահսկեն զարգացման պորտֆելը: Թեև ԽՄԻԲ-ի գործունեությունը շարունակում է ուշադրության կենտրոնում պահել Վրաստանը, ծրագիրը կշարունակի և, հնարավորության դեպքում, կընդլայնի նախորդ ժամանակաշրջանում որդեգրած տարածաշրջանային մոտեցումը:

Հիմնվելով մինչ այժմ զարգացման պորտֆելի իրականացման ընթացքում ձեռք բերված լավ փորձի վրա՝ Հարավային Կովկասում գործունեություն ծավալող շվեյցարական պետական կառույցները (ՇԶՀԳ, ՇՏՊՔ և ԽՄԻԲ) սերտորեն կհամաձայնեցնեն իրենց ջանքերը տարածաշրջանում հասնելու եռաթև սիներգիաների *(թարգմանչի կողմից՝ զարգացման, մարդասիրական և խաղաղաշինական)*՝ ազդեցությունն ընդլայնելու համար: Օրինակ՝ Աբխազիայում ԽՄԻԲ-ն ու ՇԶՀԳ-ը հստակ համաձայնեցնում են իրենց գործողությունները մարդասիրական օգնության ծրագրով: Շվեյցարական ծրագիրը իր գործողությունները կհամաձայնեցնի նաև Շվեյցարիայի միգրացիայի պետական քարտուղարության (ՇՄՊՔ) հետ, ինչպես դա արդեն արվում է Վրաստանում:

Շվեյցարիան հատուկ ուշադրություն կդարձնի իր համախոհ զարգացման գործընկերների հետ գործունեության փոխլրացնող բնույթին. զարգացման գործընկերներից են ԵՄ-ն, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (ԳՄՀԸ) և Ավստրիական զարգացման գործակալությունը (ԱԶԳ), բազմակողմ կազմակերպություններ, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ԱՄՀ-ն և Համաշխարհային բանկի խումբը, ինչպես նաև տարածաշրջանային կազմակերպություններ, ինչպիսիք են ԵԱՀԿ-ն, Եվրոպայի խորհուրդը և ՄԱԿ-ի ԵՏՀ-ն: Հաշվի առնելով համաշխարհային մարտահրավերները հաղթահարելու գործում համագործակցելու կենսական նշանակությունը՝ Շվեյցարիան հատուկ ջանքեր կգործադրի իր միջազգային գործընկերությունները ընդլայնելու ուղղությամբ և ավելի մեծ ուշադրություն կդարձնի տեղական ՔՀԿ-ների և մասնավոր հատվածի դերակատարների վրա՝ քաղաքական երկխոսության և համատեղ նախաձեռնությունների միջոցով զարգացումը խթանելու և ընդլայնելու համար: 2030 թվականի կայուն զարգացման օրակարգը ապահովում է այս ջանքերի իրագործման հիմնական շրջանակը: Շվեյցարիան կշարունակի սերտորեն աշխատել ՄԱԿ-ի մշտական համակարգողների հետ՝ ՄԱԿ-ի զարգացման համակարգի բարեփոխումների իրականացմանն աջակցելու նպատակով:

Շվեյցարիան կշարունակի գործադրել աջակցության տարբեր միջոցներ (օրինակ՝ երկկողմ և տարածաշրջանային նախագծեր, համաշխարհային նախաձեռնություններ, բազմադոնոր և նպատակային հավատարմագրային հիմնադրամներ), ինչպես նաև ընտրված խառը գործիքակազմին (օրինակ՝ օգնություն զարգացման բազմակողմ գործակալություններին, երկկողմ միջամտություններ և աջակցություն քաղաքացիական հասարակությանը և մասնավոր հատվածին): Երկարաժամկետ կայունություն ապահովելու համար ծրագիրը հատուկ ուշադրություն կդարձնի իր միջամտությունների ինստիտուցիոնալացմանը և հնարավորության դեպքում կօգտագործի երկրի համակարգերը: Հաշվի առնելով մասնավոր հատվածի առանցքային դերը կայուն զարգացման գործում՝ Շվեյցարիան Հարավային Կովկասում ձգտելու է ընդլայնել մասնավոր հատվածում իր ներգրավվածության մակարդակը: Այդ նպատակով շվեյցարական ծրագիրը կփորձի գտնել արդյունարար և մասշտաբային լուծումներ՝ զարգացման մարտահրավերները հաղթահարելու նպատակով խթանելու ձեռնարկատիրական գաղափարները ու նորարարական բիզնես մոդելները և փոխանցելու սեփական գիտելիքներն ու փորձը:

# 7. Ծրագրի ղեկավարում

Ծրագիրը կղեկավարի կառավարման թիմը՝ Թբիլիսիում տեղակայված տարածաշրջանային համագործակցության գրասենյակի ղեկավարի գլխավորությամբ և Հայաստանում ու Ադրբեջանում գործող դեսպանատների համագործակցության թիմերի օգնությամբ: Յուրաքանչյուր երկրում ինչպես ընդհանուր ծրագրի, այնպես էլ կոնկրետ միջամտությունների հետ կապված զարգացումներն ուշադրությամբ կմշտադիտարկվեն: Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի. (i) բարեփոխումների իրականացմանը և բարենպաստ միջավայրին, (ii) իրադրությունը վիճելի տարածքներում և սահմանամերձ շրջաններում գտնվող ազգային փոքրամասնությունների վիճակը, և (iii) տարածաշրջանային երկխոսության և համագործակցության կարգավիճակը: Արդյունքների շարունակական մշտադիտարկում կիրականացվի յուրաքանչյուր երկրի և տարածաշրջանային մակարդակներում: Ծրագրի մշտադիտարկման և ղեկավարման գործընթացների ողջ ընթացքում գենդերային խզվածքները հասկանալու և նվազեցնելու ջանքերը չեն դադարի:

Երկրի համատեքստը մշտադիտարկվում է Զարգացման հետ կապված փոփոխությունների մշտադիտարկման համակարգի (MERV) միջոցով, որը հետևում է տնտեսական, սոցիալական, բնապահպանական և քաղաքական զարգացումներին և ազդեցությանը շվեյցարական ծրագրի վրա: Սցենարները կվերանայվեն և անհրաժեշտության դեպքում ծրագիրը կհամապատասխանեցվի երկրի համատեքստին: MERV-ն Զարգացման հետ կապված փոփոխությունների մշտադիտարկումն անցկացվում է առնվազն տարին մեկ անգամ:

Արդյունքների շրջանակով սահմանված մշտադիտարկմամբ (Հավելված 1) գնահատվում է շվեյցարական պորտֆելի վերջնարդյունքներին հասնելու առաջընթացը և ներդրումները տարածաշրջանային մակարդակում և յուրաքանչյուր երկրի զարգացման վերջնարդյունքներում, ինչպես նաև Շվեյցարիայի Միջազգային համագործակցության 2021–2024 թվականների ռազմավարության և 2030 թվականի կայուն զարգացման օրակարգի նպատակներում:

Արդյունքների շրջանակը կվերանայվի շվեյցարական ծրագրի միջնաժամկետ ստուգման ընթացքում: Համագործակցության թիմի կարողությունները կհզորացվեն կոնֆլիկտազգայուն ծրագրերի կառավարում (ԿԶԾԿ) իրականացնելու համար:

Հարավային Կովկասի համար շվեյցարական համագործակցության 2022–2025 թվականների ծրագրի շրջանակում նախատեսված ծրագրային հատկացումները կազմում են 80, 22 միլիոն շվեյցարական ֆրանկ, որից ՇԶՀԳ-ի ներդրումը՝ 62, 62 միլիոն, ՇՏՊՔ-ինը՝ 12 միլիոն, իսկ ԽՄԻԲ-ինը՝ 5, 6 միլիոն շվեյցարական ֆրանկ:

Սույն ռազմավարության քառամյա ժամանակահատվածի համար նախատեսված պարտավորությունների և հատկացումների մասին տեղեկատվությունը պայմանական է: Փաստացի հատկացումները կախված կլինեն տարբեր գործոններից, ինչպիսիք են գործընկեր երկրի բազային պայմանները և Շվեյցարիայի խորհրդարանի կողմից հատկացման համար լիազորված վարկերը:

# Հավելված 1.
# Արդյունքների շրջանակ 2022–2025

<table>
<tr><td colspan="3">Շվեյցարական պորտֆելի վերջնարդյունքը 1. Քաղաքացիական ներգրավվածության և տարածքի, ինչպես նաև համագործակցության պաշտպանությունն ու խթանումը տարածաշրջանում՝ Նպաստելով 2021-2024 ՄՅ ռազմավարության ենթանպատակների իրագործմանը.<br>ԵՆ 8. Ձևավորել վստահություն, կանխել հակամարտությունները, խթանել խաղաղություն և ձևավորել հարգանք միջազգային իրավունքի նկատմամբ<br>ԵՆ 9. Ամրապնդել և խթանել մարդու իրավունքներն ու գենդերային հավասարությունը<br>ԵՆ 10. Խթանել արդյունավետ կառավարումը և օրենքի գերակայությունը, ինչպես նաև հզորացնել քաղաքացիական հասարակությունը</td></tr>
<tr><td colspan="3">Փոփոխության տեսություն.<br>ԵԹԵ Հարավային Կովկասում բնակվող կանայք, տղամարդիկ և ՔՅԿ-ներն ակտիվորեն ու ներառականորեն մասնակցեն ազգային և տեղական մակարդակում որոշումների կայացմանը, վստահության ձևավորմանն ու իրենց կենսակերպի վրա ազդեցություն ունեցող երկխոսության կայացման գործընթացներին, և ԵԹԵ տարածաշրջանային ու բազմակողմ քաղած դասերը խաղաղության, գենդերի, կառավարման, միջսահմանային շուկաների, շրջակա միջավայրի ռիսկերի և մշակույթի վերաբերյալ փոխանակվեն և կապիտալացվեն, ԱՊԱ տարածաշրջանի հասարակությունները կդառնան ավելի խաղաղ, արդար, հանդուրժող ու դիմակայուն, ՔԱՆԻ ՈՐ կբարձրացվի քաղաքացիների և ՔՅԿ-ների իրազեկվածության մակարդակը, ու կամրապնդվեն կարողությունները, ու ՔԱՆԻ ՈՐ կանայք և տղամարդիկ կպահանջեն ներգրավվել կառավարման գործընթացներում և իրավունք ունենալ լսելի լինել, իսկ իշխանություններն աջակցություն կստանան (ՇՊԱ2), որպեսզի արձագանքեն այս պահանջներին:</td></tr>
<tr><td>(1) Շվեյցարական պորտֆելի վերջնարդյունքները</td><td>(2) Շվեյցարական ծրագրի ներդրումը</td><td>(3) Տարածաշրջանային զարգացման վերջնարդյունքները</td></tr>
<tr><td>Վերջնարդյունքների փաստագրում. Հարավային Կովկասի հասարակական կազմակերպություններն ու ժողովուրդները, ներառյալ հակամարտություններից տուժած բնակչությունն ու փոքրամասնությունները, ներգրավված են ազգային քաղաքականությանն առնչվող քննարկումներում, պաշտոնական որոշումների կայացման և տարածաշրջանային գիտելիքների գեներացման գործընթացներում և կայուն տնտեսական զարգացումը և խաղաղ, ներառական ու դիմակայուն հասարակությունների զարգացումը խթանելու</td><td>ՔՅԿ-ների գործունեությանը և կարողությունների զարգացմանը, ինչպես նաև քաղաքացիների, մասնավորապես՝ կանանց հզորացմանն ուղղված աջակցությունը մեծացնում է նրանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում, ինչպես նաև վստահություն է ստեղծում և իրականացնում փոխանակման ծրագրեր հակամարտող գոտիներում:<br><u>Ենթադրություններ.</u><br>● Կառավարությունները բաց են՝ արտաքին դերակատարների հետ համագործակցելու:</td><td>Վերջնարդյունքների փաստագրում. Հարավային Կովկասում բնակվող կանայք և տղամարդիկ (ներառյալ հակամարտությունից տուժած բնակչությունն ու փոքրամասնությունները) օգուտներ են քաղում սոցիալ-տնտեսական և քաղաքացիական ներգրավվածությունից, ակտիվորեն մասնակցում են հանրային երկխոսությանն ու խթանում միջմշակութային և միջկոնֆլիկտային երկխոսությունը:</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| **համատեղ գործողությունների մեջ, ինչպես նաև վստահության ձևավորման ու երկխոսության իրականացման գործընթացներում:**<br><br><u>Ցուցանիշներ.</u><br>1.1 Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների թիվը, որոնք նպաստում են բազմակողմ երկխոսության կայացմանը կամ մարդու իրավունքների և հավասարության նկատմամբ հարգանքի ձևավորմանը (REG):<br>***Ելակետ. 6***<br>***Թիրախ. 12***<br>***Աղբյուր. ծրագիրն իրականացնող գործընկերների զեկույցներ***<br><br>1.2 Քաղաքացիական հասարակության նախաձեռնությունների թիվը, որոնք նպաստում են հակամարտությունների կանխարգելմանը կամ վերափոխմանը և փոխհակամարտող կողմերի միջև վստահության ձևավորմանը (REG):<br>***Ելակետ. 10***<br>***Թիրախ. 18***<br>***Աղբյուր. ծրագիրն իրականացնող գործընկերների զեկույցներ***<br><br>1.3 Մեկուսացման, խտրականության և անհավասարության նվազեցմանն ուղղված ծրագրերից օգտվող մարդկանց թիվը, որոնք անտեսման ռիսկի տակ են: (POV_ՀԱՑ_1) (REG)<br>***Ելակետ. 0***<br>***Թիրախ. 500***<br>***Աղբյուր. ՄԱԿ Կանանց տարեկան զեկույցներ***<br><br>1.4 Հայ, ադրբեջանցի և վրացի արվեստագետներին միմյանց կապող տարածաշրջանային | • ՀԿ-ները և ՔՀԿ-ները քաջատեղյակ են իրենց իրավունքների մասին և ակտիվորեն իրացնում են դրանք տարատեսակ հարթակներով և միջոցներով:<br>• Կառավարությունները և գործող իշխանությունները պատրաստ են մասնակցել վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումներումներգրավելքաղաքացիական հասարակությանը:<br>• Կանայք և կանանց ղեկավարած ՔՀԿ-ները զգալիորեն ակտիվ են իրենց մտահոգությունները բարձրաձայնելու և իրավունքները պաշտպանելու հարցերում:<br>• Հակամարտության հետևանքով տուժած անձանց (մասնավորապես՝ կանանց, ազգային փոքրամասնությունների)՝ քաղաքական խոսույթի (դիսկուրսի) մեջ ներգրավելը հավելյալ արժեք է ներկայացնում կառավարությունների համար:<br>• Կանանց տնտեսական հզորացումը շարունակում է կառավարությունների օրակարգում առաջնահերթ մնալ:<br>• Կառավարությունները ձգտում են բարձրացնել կանանց քաղաքական ներկայացվածությունը կառավարման տարբեր մակարդակներում:<br>• Կանանց հզորացմանն ուղղված բազմակողմ համագործակցության ուղիներ են մշակում՝ փոխարինելու տարածաշրջանային անիրագործելի փոխանակման ծրագրերը:<br><u>Ռիսկեր.</u><br>• Կառավարությունները դառնում են առավել կենտրոնացված (մասնավորապես, | <u>Տարածաշրջանային ռազմավարություն</u><br>Կովկասյան տարածաշրջանային հետազոտությունների օրակարգ. Կովկասի էկոտարածաշրջանային պահպանության ծրագիր<br><u>Ցուցանիշներ.</u><br>1.1 Վստահության ամրապնդմանն ուղղված փոխհակամարտող կողմերի նախաձեռնությունների թիվն աճում է:[1]<br>***Ելակետ. 0***<br>***Թիրախ. 500***<br>***Աղբյուր. կառավարության զեկույցներ***<br><br>1.2 ՔՀԿ կայունության ցուցանիշ (REG)<br>***Ելակետ. Կայունության աճ կամ նվազում (միջինը՝ 4.5% բոլոր 3 երկրների համար)***<br>***Թիրախ. կայունության բարձր ցուցանիշ***<br>***Աղբյուր. ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող ՔՀԿ կայունության ինդեքս (համաթիվ)***<br><br>1.3 Հարավային Կովկասում գենդերային հավասարության ցուցանիշ (REG)<br>***Ելակետ. ենթակա է փոփոխման՝ կախված Թբիլիսիի Պետական Համալսարանին կից Տնտեսագիտության Միջազգային Դպրոցի (ISET) աշխատանքից՝ ԿՏՀ 2-ի մեկնարկին***<br>***Թիրախ. ենթակա է փոփոխման՝ կախված ISET-ի աշխատանքից՝ ԿՏՀ 2-ի մեկնարկին***<br>***Աղբյուր. ISET զեկույցներ*** |

1 Հիմնականում ԽՄԻԲ-ի գործունեությունը Վրաստանում (վերաբերում է նաև շվեյցարական պորտֆելի վերջնարդյունքների 1.1 և 1.2 ցուցիչներին):

| | | |
|---|---|---|
| միջմշակութային երկխոսությունների և փոխանակման ծրագրերի թիվն ու դրանց տեսակները տեսողական և կատարողական արվեստների ոլորտում (REG)<br>***Ելակետ. 0***<br>***Թիրախ. նվազագույնը՝ 50***<br>***Աղբյուր. ծրագիրն իրականացնող գործընկերների զեկույցներ***<br>1.5 Առավել տեղեկացված, հզոր կարողություններով և տնտեսությանը մասնակցելու հմտություններով օժտված շահառու կանանց թիվը (REG)<br>***Ելակետ. 0***<br>***Թիրախ. 1,850***<br>***Աղբյուր. ՄԱԿ Կանանց տարեկան զեկույցներ***<br><br>1.6 Նոր կամ ավելի լավ աշխատանք ստացող կանանց թիվը (IED_ՀԱՑ_2) (REG)<br>***Ելակետ. 0***<br>***Թիրախ. 680***<br>***Աղբյուր. SCO AR, ծրագիրն իրականացնող գործընկերների զեկույցներ (օրինակ՝ ՄԱԿ Կանանց տարեկան զեկույցներ)***<br><br>1.7 Աջակցություն ստացող արժեշղթաներում միջսահմանային շուկայական կապերի թիվը (REG)<br>***Ելակետ. 0***<br>***Թիրախ. 5***<br>***Աղբյուր. իրականացման վերաբերյալ զեկույց. գործընկեր***<br><br>1.8 Աղետների ռիսկերի կառավարման, կլիմայական փոփոխությունների հարմարվողականության և լեռնային շրջանների կայուն զարգացման վերաբերյալ գիտելիքների փոխանակման և բազմակողմ երկխոսությունների թիվը (REG)<br>***Ելակետ. 1***<br>***Թիրախ. 5***<br>***Աղբյուր. Կայուն Կովկասի տարեկան զեկույցներ*** | երբ բախվում են հանրային առողջության լայնամասշտաբ խնդիրների) և հետաձգում են իրավասությունների պատվիրակումը:<br>● Հակամարտությունների վերաբերյալ քննարկումներին և կանանց ու ազգային փոքրամասնություններին առնչվող երկխոսություններին վերջիններիս մասնակցության համար դեռևս սահմանափակ տարածք է հատկացվում:<br>● Քաղաքականացումն ու անվտանգության գերակա խնդիրները խոչընդոտում են վստահության ամրապնդմանն ուղղված գործողությունները հակամարտությունների ընթացքում: ՔՀԿ-ներն անտեսվում են կամ նրանց դիրքորոշումները չեն դիտարկվում:<br>● Գենդերային հավասարության, կանանց հզորացման և մասնակցության թեմաները մնում են սոսկ քննարկումների մակարդակում:<br>● ՈՈՉԱ խմբերը շարունակում են մնալ մարգինալացված և անտեսված:<br>● Տարածաշրջանային մշակութային փոխանակման ծրագրերի իրագործումը դժվարանում է՝ աշխարհաքաղաքական բարդ իրավիճակի պատճառով:<br>● Քաղաքացիներին և ՔՀԿ-ներին ազգային քաղաքական խոսույթին (դիսկուրսին) և որոշումների կայացմանը մասնակցելու համար սահմանափակ տարածք է տրամադրվում: | 1.4 Ազգային մակարդակով ընդունված առողջ քաղաքականությունների և/կամ կիրառելի օրենքների թիվն՝ ուղղված գենդերային հավասարության խթանմանն ու կանանց հզորացմանը: (REG)<br>***Ելակետ. 0***<br>***Թիրախ. նվազագույնը՝ 6***<br>***Աղբյուր. կառավարությունների՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի հաշվետվություններ, ՄԱԿ Կանանց հրապարակումներն ու զեկույցները***<br><br>1.5 Գյուղմթերքի ներմարզային արտահանման ծավալների ու տոկոսային փոփոխությունը (REG)<br>***Ելակետ. 144,7 մլն ԱՄՆ դոլար (2019)***<br>***Թիրախ. 160 մլն ԱՄՆ դոլար***<br>***Աղբյուր. MEPA*** |

| (4) Միջամտությունների ուղղությունները |
|---|
| ● Երեք երկրներում ձգտել **հզորացնել կանանց տնտեսական, սոցիալական և քաղաքացիական կյանքում**՝ ստեղծելով քաղաքական և օրենսդրական նպաստավոր միջավայր, զարգացնելով գենդերային հավասարության խնդիրներով զբաղվող ազգային կառույցների և տեղական գործընկերների կարողությունները և խրախուսելով մասնավոր հատվածին՝ ներգրավելու ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց:<br>● **Ամրապնդել ժողովրդավարությունն ու ժողովրդավարական արժեքները և մարդու իրավունքները**՝ խթանելով երեք երկրներում բազմակարծիք, նորարարական և մասնակցային մշակութային ոլորտը՝ միջմշակութային երկխոսության և փոխանակման ծրագրերի միջոցով:<br>● Ազգային և կրոնական փոքրամասնությունների **ինտեգրման և մասնակցության** միջոցով **նպաստել համահասարակական մոտեցման զարգացմանը** և ամրապնդել կառավարության և ՔՀԿ-ների միջև համապատասխան խորհրդատվական մեխանիզմները:<br>● **Խթանել վստահության ամրապնդմանն ուղղված գործողությունները** հակամարտությունների գոտիներում (ABK/SO): Շարունակել քաղաքական երկխոսությունը կառավարության/գործող իշխանությունների հետ (միևնույն ժամանակ խորհրդակցելով ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ)՝ որդեգրելու հակամարտությունների վերափոխման գործնական (պրագմատիկ) և հետևողական քաղաքականություններ:<br>● Խթանել **արտադրական գործոնների** (ապրանքներն ու մարդիկ ներառյալ), ինչպես նաև գաղափարների և տեղեկատվության **տարածաշրջանային հոսքը**՝ հիմնականում աջակցելով քաղաքացիական կենսունակ տարածքի և բազմազան մեդիա դաշտին. կենտրոնանալ այն **հասարակական տարրերի** վրա, որոնք առավել խոստումնալից են խաղաղ, ներառական և դիմակայուն հասարակություններ ստեղծելու հարցում:<br>● Աջակցել այն **կազմակերպական գործընկերություններին, որոնք ունեն տարածաշրջանային հասանելիություն**՝ ցանցերի, հարթակների, կոնսորցիումների և այլ կազմակերպությունների միջոցով: |
| **(5) Ռեսուրսներ, գործընկերություններ (շվեյցարական ծրագիր)** |
| Միջամտությունների համար հասանելի միջոցները կազմում են 9.8 միլիոն ֆրանկ:[2]<br>Գործընկերություններ<br>Ազգային կառավարական հիմնական հաստատություններ. Արդարադատության նախարարություն (Հայաստան, Վրաստան), Օկուպացված տարածքներից հարկադիր վերաբնակների, աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության հարցերի նախարարություն (Վրաստան), Ընտանիքի, կանանց և երեխաների հարցերի պետական կոմիտե (Ադրբեջան), Հաշտեցման և իրավահավասարության հարցերով պետական նախարարություն (Վրաստան), Արտաքին գործերի նախարարություն (Վրաստան):<br>Տեղական իշխանություններ՝ քաղաքապետարաններ, քաղաքապետարանների միավորումներ:<br>Այլ հասարակական կառույցներ՝ Ստեղծագործ Վրաստան ՀԻԻԱ (Վրաստան)<br>Շահագրգիռ կողմեր Աբխազիայում<br>Ծրագրերն իրականացնող հիմնական միջազգային գործընկերներ՝ ՄԱԿ-ի գործակալություններ<br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ՝ կանանց ռեսուրս-կենտրոններ, Գործողություն սովի դեմ, տեղական և տարածաշրջանային հասարակական կազմակերպություններ<br>Մասնավոր հատված՝ գործարար միավորումներ (ասոցիացիաներ) |

2 Ենթակա է փոփոխման՝ կախված Խորհրդարանի որոշումներից:

<table>
<tr><td colspan="3">Շվեյցարական պորտֆելի վերջնարդյունքը 2. Ժողովրդավարության և հանրային ինստիտուտների ամրապնդում<br>Նպաստելով 2021-2024 թվականների ՄՀ ռազմավարության ենթանպատակների իրագործմանը.<br>ԵՆ 8. Ձևավորել վստահություն, կանխել հակամարտությունները և ձևավորել հարգանք խաղաղության ու միջազգային իրավունքի նկատմամբ<br>ԵՆ 9. Ամրապնդել և խթանել մարդու իրավունքները և գենդերային հավասարությունը<br>ԵՆ 10. Խթանել արդյունավետ կառավարումը և օրենքի գերակայությունը, ինչպես նաև ամրապնդել քաղաքացիական հասարակության կարողությունները</td></tr>
<tr><td colspan="3">Փոփոխության տեսություն. Եթե ազգային և տեղական մակարդակներում պետական հաստատությունները ներառական և հաշվետու լինեն բոլոր իրավատերերին, և եթե նրանք ենթարկվեն օրենքի գերակայությանը, ԱՊԱ հանրային ռեսուրսների օգտագործումն ու բաշխումը կլինի թափանցիկ և արդյունավետ, և մարդիկ կօգտվեն ակտիվ քաղաքացիական գործելակերպի (պրակտիկա), տնտեսական գործունեության և միջսահմանային նախաձեռնությունների համար ստեղծված նպաստավոր միջավայրերից, ՈՐՈՎՀԵՏԵՎ կզարգանան գործադիր և օրենսդիր մարմինների կարողությունները, և ՈՐՈՎՀԵՏԵՎ բարեփոխումները աջակցություն կստանան և կիրականանան:</td></tr>
<tr><td>(1) Շվեյցարական պորտֆելի վերջնարդյունքները</td><td>(2) Շվեյցարական ծրագրի ներդրումը</td><td>(3) Բազմակողմ զարգացման վերջնարդյունքները</td></tr>
<tr><td>Վերջնարդյունքների փաստագրում. Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում ազգային և տեղական մակարդակներում պետական հաստատությունները առավել արդյունավետ են, ներառական և հաշվետու՝ բոլոր քաղաքացիների և իրավատերերի առաջ, և այս ինստիտուտները առաջնորդվում են օրենքի գերակայությամբ:<br><br>Ցուցանիշներ<br>2.1 Աջակցություն ստացող տեղական իշխանությունների թիվը, որոնք օգտվել են բյուջեի ավելացված միջոցներից: (GOV_ARI2) (Հայաստան, Վրաստան)<br>Ելակետ Հայաստան. 34<br>Թիրախ Հայաստան. 52<br>Աղբյուր. քաղաքապետարանի բյուջե/քաղաքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՔԿՏՀ)<br><br>Ելակետ Վրաստան. 0<br>Թիրախ Վրաստան. 23<br>Աղբյուր. ծրագիրն իրականացնող գործընկերների զեկույցներ<br><br>2.2 Աջակցություն ստացող այն ենթազգային կառավարությունները, որոնք գոհ են կառավարության այլ ստորաբաժանումներիմիջևառկաերկխոսության</td><td>Քաղաքական երկխոսության և կառավարման, ապակենտրոնացման և օրենքի գերակայության, ինչպես նաև ընտրված ոլորտներում կարողությունների զարգացման միջոցով որոշումների կայացումը և հանրային ֆինանսների կառավարումը դառնում են ավելի թափանցիկ, ներառական և արդյունավետ:<br>Ենթադրություններ.<br>• Կառավարությունները բաց են արտաքին դերակատարների հետ համագործակցության համար:<br>• Քաղաքացիները իրազեկ են իրենց իրավունքների մասին և հազվադեպ են խնդիրներ ունենում դրանց իրացման ժամանակ:<br>• Կառավարությունները խրախուսում և ողջունում են ակտիվ քաղաքացիական գործելակերպը (պրակտիկա):<br>• Իշխանությունները հավատարիմ են շարունակվող բարեփոխումների գործընթացներին:</td><td>Վերջնարդյունքների փաստագրում. Կանայք և տղամարդիկ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում օգտվում են հանրային հատվածների ներառականությունից, հաշվետվողականությունից և արդյունավետությունից, ինչպես նաև այն միջավայրերից, որոնք նպաստում են ակտիվ քաղաքացիական գործելակերպի (պրակտիկա), տնտեսական գործունեության և/կամ միջսահմանային նախաձեռնություններին:<br><br>Ազգային ռազմավարություն<br>Հայաստան. Կառավարության ծրագիր (2019), Տարածաշրջանային զարգացման 2016-2025 թվականների հայկական ռազմավարություն:<br><br>Ադրբեջան. Ադրբեջան 2030 սոցիալ-տնտեսական զարգացման ազգային առաջնահերթություններ, պետական պարտքի կառավարման միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարություն, քաղաքացիական ծառայության զարգացման 2019–2025 թվականների ռազմավարություն:<br><br>Վրաստան. ապակենտրոնացման ռազմավարություն</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| մակարդակից և արձագանքման ունակությունից: (GOV_TRI3) (Հայաստան)<br>***Ելակետ Հայաստան. 90%***<br>***Թիրախ Հայաստան. 97%***<br>***Աղբյուր. քաղաքապետարանի կողմից իրականացված հետազոտություն (իրականացված ծրագրի շրջանակում)***<br>2.3 Մարդկանց թիվը, որոնք մասնակցում և ազդեցություն են ունենում իրենց բնակավայրերում հանրային ծառայությունների մատուցման, որոշումների կայացման և բյուջեների կազմման գործընթացների վրա: (GOV_ARI_1) (Հայաստան, Վրաստան)<br>***Ելակետ Հայաստան. Երևանից դուրս բնակվող 396,600 (16.2%) բնակիչ***<br>***Թիրախ Հայաստան. Երևանից դուրս բնակվող 650,000 (26.5%) բնակիչ***<br>***Աղբյուր. ծրագիրն իրականացնող գործընկերների զեկույցներ***<br><br>***Ելակետ Վրաստան. 0***<br>***Թիրախ Վրաստան. 500,000***<br>***Աղբյուր. ծրագիրն իրականացնող գործընկերների զեկույցներ***<br>2.4 Կին շահառուների թիվը, որոնք իրենց ներդրումն են ունեցել տեղական մակարդակում պլանավորման և բյուջետավորման/Գենդերային զգայուն բյուջեի (ԳԶԲ) քննարկումներին: (Հայաստան, Վրաստան)<br>***Ելակետ Հայաստան. 0***<br>***Թիրախ Հայաստան. 100***<br>***Աղբյուր. ՄԱԿ Կանանց տարեկան զեկույցներ***<br><br>***Ելակետ Վրաստան. 0***<br>***Թիրախ Վրաստան. 100***<br>***Աղբյուր. ՄԱԿ Կանանց տարեկան զեկույցներ***<br>2.5 Գենդերային փոխակերպման քաղաքականության և օրենսդրական բարեփոխումների թիվը (GEN_TRI_1) (Հայաստան, Վրաստան)<br>***Ելակետ Հայաստան. 0*** | Ռիսկեր.<br>● Հանրային հաստատությունները առավել կենտրոնացված են դառնում՝ սահմանափակելով քաղաքացիների և ՔՀԿ-ների հետ փոխգործակցությունն ու փոխանակման ծրագրերը:<br>● Քաղաքացիներին ու ՔՀԿ-ներին տարհամոզում են իրենց իրավունքներն իրացնելուց և պաշտպանելուց:<br>● Կասեցվում են տարածաշրջանային/ապակենտրոնացման բարեփոխումները:<br>● Կանանց տնտեսական և քաղաքական հզորացումը կառավարությունների օրակարգում առաջնային չէ:<br>● Բարդ աշխարհաքաղաքական իրավիճակի պատճառով տարածաշրջանային փոխանակման ծրագրերն անիրագործելի են:<br>● Ժողովրդավարության հետընթացը շարունակվում է, ինչը բացասաբար է անդրադառնում տեղական ժողովրդավարական կառավարման, մասնակցության և հաշվետվողականության վրա: | 2020–2025, բարձր լեռնային բնակավայրերի զարգացման ռազմավարություն 2019–2023, գենդերային հավասարության հայեցակարգ, մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարություն 2021–2030, Աշխատանքի և զբաղվածության քաղաքականության ազգային ռազմավարություն 2019–2023:<br><br>Ցուցանիշներ.<br>2.1 Արձագանքող, ներառական, մասնակցային և ներկայացուցչական որոշումներ կայացնող քաղաքապետարանների թիվը և համամասնությունը (Հայաստան, Վրաստան)<br>***Ելակետ Հայաստան. 34***<br>***Թիրախ Հայաստան. 52***<br>***Աղբյուր. ծրագիրն իրականացնող գործընկերների զեկույցներ***<br><br>***Ելակետ Վրաստան. 0***<br>***Թիրախ Վրաստան. 23***<br>***Աղբյուր. ծրագիրն իրականացնող գործընկերների զեկույցներ***<br><br>2.2 Որդեգրված քաղաքականությունների և բարեփոխումների թիվը, մասնավորապես՝ ֆինանսական քաղաքականության բարեփոխումների ոլորտում, որոնք ազդում են ՏԻՄ բյուջետային միջոցների փոփոխությունների վրա: (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան)<br>***Ելակետ Հայաստան. 2 (Ֆինանսական համահարթեցման մասին օրենք, ապակենտրոնացման ճանապարհային քարտեզ)***<br>***Թիրախ Հայաստան. 4 (Ֆինանսական համահարթեցման մասին նոր օրենք, ապակենտրոնացման մասին օրենք)*** |

| | | |
|---|---|---|
| ***Թիրախ Հայաստան. 2***<br>***Աղբյուր. ՄԱԿ Կանանց տարեկան զեկույցներ, Խորհրդարանի որոշում(ներ)***<br>***Ելակետ Վրաստան. 0***<br>***Թիրախ Վրաստան. 2***<br>***Աղբյուր. ՄԱԿ Կանանց տարեկան զեկույցներ***<br>2.6 Կանոնակարգող և ինստիտուցիոնալ դաշտի բարելավմանն ուղղված միջոցառումներ (SECO SI 1) (Ադրբեջան)<br>***Ելակետ Ադրբեջան. 0***<br>***Թիրախ Ադրբեջան. 3***<br>***Աղբյուր. ծրագիրն իրականացնող գործընկերների զեկույցներ***<br>2.7 Ֆինանսական կայունության բարելավմանը և շուկայի զարգացմանն ուղղված միջոցառումներ (SECO SI 1) (Ադրբեջան)<br>***Ելակետ Ադրբեջան. 0***<br>***Թիրախ Ադրբեջան. 2***<br>***Աղբյուր. ծրագիրն իրականացնող գործընկերների զեկույցներ***<br>2.8 Խորհրդատվական մեխանիզմների թիվը, որոնք մեծացնում են խաղաղապահ կազմակերպությունների և մարդու իրավունքների պաշտպանների մասնակցությունը քաղաքականության մշակմանը՝ ազգային և տեղական մակարդակներում: (Վրաստան)<br>***Ելակետ. 1***<br>***Թիրախ. 3***<br>***Աղբյուր. ծրագիրն իրականացնող գործընկերների զեկույցներ*** | | ***Աղբյուր. կառավարություն/խորհրդարան որոշումներ***<br>***Ելակետ Ադրբեջան. 0***<br>***Թիրախ Ադրբեջան. 3***<br>***Աղբյուր. նախագահի վարչակազմ***<br>***Ելակետ Վրաստան. 0***<br>***Թիրախ Վրաստան. 3***<br>***Աղբյուր. ծրագիրն իրականացնող գործընկերների զեկույցներ***<br>2.3 Տեղական մակարդակում պետություն-քաղաքացի համագործակցության տեսակներն ու թիվը (Հայաստան, Վրաստան)<br>***Ելակետ Հայաստան. 1 (ՏԻՄ օրենք)***<br>***Թիրախ Հայաստան. 2***<br>***Աղբյուր. խորհրդարանի որոշում***<br><br>***Ելակետ Վրաստան. 0***<br>***Թիրախ Վրաստան. 2***<br>***Աղբյուր. ծրագիրն իրականացնող գործընկերոջ զեկույցներ***<br>2.4 Տեղական մակարդակում տնտեսական զարգացմանն առնչվող միջոցառումներից օգտվող անձանց թիվը (Հայաստան, Վրաստան)<br>***Ելակետ Հայաստան. 396,600 (բնակչության 16.2%-ը)***<br>***Թիրախ Հայաստան. 650,000 (բնակչության 26.5%-ը)***<br>***Աղբյուր. գործընկերոջ զեկույց***<br>***Ելակետ Վրաստան. 0***<br>***Թիրախ Վրաստան. 500,000***<br>***Աղբյուր. ծրագիրն իրականացնող գործընկերների զեկույցներ***<br>2.5 Բաց բյուջետավորման վարկանիշային ցուցանիշ (Ադրբեջան, Վրաստան)<br>***Ելակետ Ադրբեջան. 35***<br>***Թիրախ Ադրբեջան. 40***<br>***Աղբյուր. միջազգային բյուջետային գործընկերություն*** |

| | | |
|---|---|---|
